


Վարչապա, 6 սեպտեմբեր, 2019թ.

Կարծիք թիվ՝ NDISCR-ARM/343/2018

www.legislationline.org



**ՄԻՋԱՆԿՅԱԼ ԿԱՐԾԻՔ «ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ (2018Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԻ)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության կողմից
օրենքի նախագծի ոչ պաշտոնական թարգմանության հիման վրա**

ԺՀՄԻԳ-ի սույն Կարծիքի կազմման գործում իրենց նպաստն են բերել Լիտվայի Սահմանադրական դատարանի դատավոր և Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի նախկին դատավոր դոկտոր Դանուտե Յոչենիեն, Բեռլինի Հումբոլդտի համալսարանի Հանրային, ռուսաստանյան և համեմատական իրավունքի դասախոս պրոֆեսոր Ալեքսանդր Բլենքենագելը, Լյուվենի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոս և Գիտահետազոտության բելգիական հիմնադրամի Իրավունքի փիլիսոփայության կենտրոնի ավագ գիտաշխատող պրոֆեսոր Ջուլի Ռինգելհայմը:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

10 Միողովա փողոց PL-00-251 Վարչապա Հեռ.՝ +48 22 520 06 00
Ֆաքս՝ +48 22 520 0605

*Առկա է նաև սույն Կարծիքի հայերեն տարբերակը:
Այնուամենայնիվ, փաստաթղթի պաշտոնական տարբերակը բացառապես
անգլերեն տարբերակն է:*

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

Բովանդակություն

I.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
II.	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԿԱՐԾԻՔԻ ԱՌԱՐԿԱՆ	3
III.	ԿԱՐԾԻՔԻ ԱՍՓՈՓԱԳԻՐԸ.....	4
IV.	ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	6
1.	Խտրականության վերացման օրենսդրությանը վերաբերող միջազգային չափորոշիչներ.....	6
2.	Օրենքի նախագծի նպատակը և դրա կիրառման շրջանակը.....	10
3.	Թույլատրելի տարբերակումները.....	14
4.	Խտրականության և արգելված հիմքերի սահմանումը	17
5.	Քրեական, քաղաքացիական և վարչական պատասխանատվություն....	21
6.	Անուղղակի խտրականության սահմանումը	22
7.	Վիկտիմիզացիա սահմանումը.....	23
8.	Խելամիտ հարմարեցումների սահմանումը.....	25
9.	Խտրականությունից իրավական և դատական պաշտպանությունը - Հոդված 7.....	26
10.	Հավասարության մարմին. Մարդու իրավունքների պաշտպան և Իրավահավասարության խորհուրդ	29
11.	Ամփոփիչ մեկնաբանություններ.....	35

Հավելված՝ «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ (նոյեմբերի 2018թ. տարբերակ)

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. 2018թ. նոյեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը դիմում ներկայացրեց ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԺՀՄԻԳ)՝ խնդրելով պատրաստել կարծիք Հայաստանի Հանրապետության «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծի մասին (այսուհետ՝ Օրենքի նախագիծ):
2. 2018թ. նոյեմբերի 30-ին ԺՀՄԻԳ-ի տնօրենն արձագանքեց այս դիմումին՝ հաստատելով Գրասենյակի պատրաստականությունը՝ պատրաստելու իրավական կարծիք Օրենքի սույն նախագծի վերաբերյալ, որը կգնահատի վերջինիս համապատասխանությունը ԵԱՀԿ մարդկային ոլորտում հանձնառությունների և մարդու իրավունքների մասով միջազգային պարտավորությունների հետ:
3. Հաշվի առնելով այն, որ Օրենքի նախագիծը հետագայում լրամշակվել է վերը նշված դիմումն ստանալուց հետո, ԺՀՄԻԳ-ը որոշեց հրապարակել Օրենքի նախագծի՝ 2018թ. նոյեմբերին ստացված տարբերակի վերաբերյալ սույն Միջանկյալ կարծիքը: Սրան կհաջորդի 2019թ. վերանայված Օրենքի նախագծի վերանայված տարբերակի վերաբերյալ երկրորդ Կարծիքի հրապարակումը:
4. Սույն Միջանկյալ կարծիքը պատրաստվել է վերանշյալ դիմումին ի պատասխան: ԺՀՄԻԳ-ն իրականացրեց սույն գնահատումը իր մանդատի շրջանակներում՝ աջակցելու ԵԱՀԿ մասնակից պետություններին մարդկային ոլորտում ԵԱՀԿ-ի հիմնական հանձնառությունների իրականացման գործում:

II. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԿԱՐԾԻՔԻ ԱՌԱՐԿԱՆ

5. Սույն Միջանկյալ կարծիքի առարկան գնահատման ներկայացված Հայաստանի Հանրապետության «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծն է: Այսպիսի սահմանափակումը հաշվի առնելով՝ Միջանկյալ կարծիքը Հայաստանում հավասարությունը և խտրականության բացառումը կառավարող ողջ իրավական և ինստիտուցիոնալ շրջանակի ամբողջական և համակողմանի գնահատումը չէ:
6. Միջանկյալ կարծիքը վեր է հանում հիմնական խնդիրները և ցույց է տալիս հնարավոր հղկման ենթակա ոլորտները: Համառոտության նպատակով այն ավելի շատ կենտրոնանում է լրամշակումների կամ բարելավման կարիք ունեցող ոլորտների վրա, քան օրենքի դրական կողմերի վրա: Կարծիքից բխող առաջարկությունները հիմնված են համապատասխան ԵԱՀԿ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

հանձնառությունների, միջազգային չափորոշիչների և միջազգային լավ փորձի վրա:

7. Ավելին, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի¹ և Գենդերային հավասարության խթանման ԵԱՀԿ-ի 2004թ. գործողությունների ծրագրի և ԵԱՀԿ-ի գործողություններում գենդերային հարցերի ներգրավման հանձնառությունների համաձայն, Միջանկյալ կարծիքը վերլուծում է Օրենքի նախագծի լրամշակումների՝ հավանաբար տարբեր ազդեցությունները կանանց և տղամարդկանց վրա:²
8. Սույն Միջանկյալ կարծիքը հիմնված է Օրենքի նախագծի՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից տրամադրված ոչ պաշտոնական անգլերեն թարգմանության վրա: Սույն Միջանկյալ կարծիքն առկա է նաև հայերեն թարգմանությամբ: Այնուամենայնիվ, փաստաթղթի միակ պաշտոնական տարբերակն անգլերենն է:
9. Վերոնշյալը հաշվի առնելով՝ ԺՀՄԻԳ-ը ցանկանում է նշել, որ սույն Միջանկյալ կարծիքը չի արգելում ԺՀՄԻԳ-ին, իր հայեցողությամբ, ապագայում ձևակերպել լրացուցիչ գրավոր կամ բանավոր առաջարկություններ կամ մեկնաբանություններ՝ Հայաստանի իրավական ակտերի կամ վերաբերելի օրենսդրության վերաբերյալ:

III. ԿԱՐԾԻՔԻ ԱՍՓՈՓԱԳԻՐԸ

10. ԺՀՄԻԳ-ը ողջունում է խտրականության տարբեր ձևերին համակողմանիորեն արձագանքելու ջանքերը այնպիսի Օրենք նախագծի միջոցով, որը փորձում է վերաբերել ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ոլորտներին: Օրենքի նախագիծը պարունակում է բազմաթիվ դրական տարրեր, որոնք ուղղված են իրավական նորմերի և կարգավորումների, հատուկ միջոցների ներմուծման, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանն կազմում խտրականության դեմ պայքարող հատուկ մարմնի հիմնման միջոցով հավասարություն երաշխավորելուն:
11. Միևնույն ժամանակ, Օրենքի նախագծի համար կարող էին շահեկան լինել մի շարք վերանայումներն ու հստակեցումները, որոնք կմեծացնեին դրա արդյունավետությունը, թույլ կտային խուսափել անորոշությունից ու կապահովեին հավասարության սկզբունքների պահպանումը՝ նաև երաշխավորելով այն հաստատության արդյունավետությունն ու

¹ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիան ընդունվել է Գլխավոր ասամբլեայի 34/180 բանաձևով, 1979թ. դեկտեմբերի 18-ին: Հայաստանը միացել է այս Կոնվենցիային 1993թ.-ին:

² Տե՛ս թիվ 14/04 որոշմամբ ընդունված [Գենդերային հավասարության խթանման ԵԱՀԿ գործողությունների ծրագրի](#) կետ 32-ը, MC.DEC/14/04 (2004թ.):

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

վստահելիությունը, որը լիազորված է վերահսկել և կիրարկել այս Օրենքի նախագիծը:

12. Ավելի կոնկրետ և ի լրումն վերաբերյալի, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը հանդես է գալիս հետևյալ առաջարկություններով՝ Օրենքի նախագծի հետագա կատարելագործման նպատակով.

Ա. վերանայել օրենքի անվանումը՝ հստակեցնելու, որ այն երաշխավորում է հավասար վերաբերմունք և հավասար հնարավորություններ՝ յուրաքանչյուր անհատի և քաղաքացու իրավունքների և ազատությունների ճանաչման, իրացման և կիրարկման համար առանց խտրականության [կետ 25],

Բ. հանել իրավաչափության, անհրաժեշտության և համաչափության չափանիշներով փորձարկումներին արվող հղումները *prima facie* (*առերևույթ*) խտրականության սահմանումից և առանձին տալ փորձարկման ավելի ամբողջական և համակողմանի սահմանում՝ նախընտրաբար նաև ցույց տալով, որ մի շարք պաշտպանված հատկանիշների հիման վրա ուղղակի խտրականության դեպքերում պահանջվում է ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն [կետ 38],

Գ. ընդգրկել լրացուցիչ պաշտպանված հատկանիշներ՝ մասնավորապես հղում անելով սեռական կողմնորոշմանը, գենդերային ինքնությանը, կրոնին, հավատքին, ինչպես նաև ազգային ծագմանը և քաղաքացիությանը, [կետ 50],

Դ. ապահովել Հավասարության մարմնի, ինչպես նաև օրինական շահ ունեցող հասարակական կազմակերպությունների համար համապատասխան իրավասություն՝ դատարան դիմել խտրականությունից ենթադրյալ տուժողի անունից կամ աջակցելու նրան և ներառել մի դրույթ, որն ուղղված է ապահովել հաշտեցման ընթացակարգերի առկայությունն այն անձանց համար, ովքեր կարծում են, որ տուժել են խտրականությունից, ինչպես նաև այս լիազորությունները վերագրել Մարդու իրավունքների պաշտպանին և հավասարության՝ հատուկ ստեղծված մարմին [կետ 71],

Ե. սահմանել Մարդու իրավունքների պաշտպանի մանդատը, իրավասությունները և լիազորությունները խտրականության բացառման ոլորտում և ներառել հղումներ Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքի այն համապատասխան դրույթներին, որոնք սահմանում և նկարագրում են նրա մանդատը, իրավասությունները և լիազորությունները խտրականության դեմ պայքարում և հավասարությունը խթանելու գործում [կետ 82], ինչպես նաև սահմանել Հավասարության մարմնի մանդատը, որն ապահովում է վերջինիս գործառույթների արդյունավետ իրականացում թե՛ օրենքում, թե՛ գործնականում՝ իրավական պաշտպանության միջոցներ կիրառելու տեղ գտած խտրականության դեմ, եթե իշխանությունները որոշեն ստեղծել այսպիսի մի մարմին գոյություն ունեցող հաստատության կազմում [կետ 86]:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

Լրացուցիչ առաջարկությունները, որոնք ընդգծված են թավ գրությամբ, նույնպես ներառված են կարծիքի տեքստում:

IV. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խտրականության վերացման օրենսդրությանը վերաբերող միջազգային չափորոշիչներ

13. Սույն Կարծիքը վերլուծում է այս Օրենքի նախագիծը մարդու իրավունքներին վերաբերող համապատասխան միջազգային պարտավորությունների, չափորոշիչների և ԵԱՀԿ հանձնառությունների հետ դրա համատեղելիության տեսանկյունից: Խտրականության վերացման միջազգային պարտավորությունները լայն շրջանակ ունեն. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը³ («ՄԻՀՀ», Հոդված 7), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը⁴ (այսուհետ՝ «ՔՔԻՄԴ», Հոդված 26) և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը⁵ (այսուհետ՝ «ՏՄՄԻՄԴ», Հոդված 2 կետ 2), ի թիվս այլոց, անդրադառնում են խտրականության բացառման սկզբունքին:
14. Հայաստանի կողմից վավերացված այլ, խտրականության բացառմանն ուղղված ավելի կոնկրետ պայմանագրերի և կոնվենցիաների թվում են նաև Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Միացյալ Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) կոնվենցիան⁶ (այսուհետ՝ «ՌԽՎԿ»), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիան (այսուհետ՝ «ԿԽՎԿ») ⁷, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիան⁸ (այսուհետ՝ «ՀԱԻԿ»), Երեխայի իրավունքների կոնվենցիան⁹ (այսուհետ՝ «ԵԻԿ», Հոդված 2):

³ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 217 Ա (III) բանաձևով 1948թ. դեկտեմբերի 10-ին:

⁴ ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2200Ա (XXI) բանաձևով, 1966թ. դեկտեմբերի 16-ին: Հայաստանի Հանրապետությունը միացել է ՔՔԻՄԴ-ին 1993թ. հունիսի 23-ին:

⁵ ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2200Ա (XXI) բանաձևով, 1966թ. դեկտեմբերի 16-ին: Հայաստանի Հանրապետությունը միացել է ՏՄՄԻՄԴ-ին 1993թ. սեպտեմբերի 13-ին:

⁶ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2106 (XX) բանաձևով, 1965թ. դեկտեմբերի 21-ին և ստորագրվել է 1966թ. մարտի 7-ին: Հայաստանի Հանրապետությունը միացել է ՌԽՎԿ-ին 1993թ. հունիսի 23-ին:

⁷ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, ընդունվել է Գլխավոր ասամբլեայի երեսուներեքերորդ նստաշրջանի ընթացքում 34/180 բանաձևով, 1979թ. դեկտեմբերի 18-ին: Հայաստանի Հանրապետությունը միացել է այս Կոնվենցիային 1993թ. սեպտեմբերի 13-ին:

⁸ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա, ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 13-ին Գլխավոր ասամբլեայի վաթսուամեկերորդ նստաշրջանի ընթացքում A/RES/61/106 բանաձևով: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՀԱԻԿ-ը 2010թ. սեպտեմբերի 22-ին:

⁹ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 44/25 բանաձևով, 1989թ. նոյեմբերի 20-ին: Հայաստանի Հանրապետությունն ընդունեց ԵԻԿ 1993 թ. հունիսի 23-ին:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

15. Եվրոպայի խորհրդի մակարդակում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի¹⁰ (ՄԻԵԿ) Հոդված 14-ը և դրա Հավելված 12-ը նախատեսում են խտրականության ընդհանուր արգելք:¹¹ Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան¹² (ՎԵՄԽ) և Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան¹³ (այսուհետ՝ «Շրջանակային կոնվենցիա», Հոդված 4), ինչպես նաև Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիան (այսուհետ՝ «Ստամբուլյան կոնվենցիա») նույնպես արգելում են խտրականությունը:¹⁴
16. Թե՛ ԲԲԻՄԴ-ի Հոդված 26-ը, թե՛ ՄԻԵԿ-ի Հոդված 14-ը անհատներին պաշտպանում են լայն և ոչ սպառիչ շրջանակով ներկայացված հիմքերով խտրականությունից:¹⁵ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն խտրականությունը սահմանել է որպես Հոդված 26-ում թվարկված հիմքերով «ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախընտրություն», որն ունի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հավասար հիմքերով ճանաչումը, իրականացումը կամ օգտագործումը չեղյալ հայտարարելու կամ նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում է այդպիսի հետևանքների:¹⁶ Թե՛ ԲԲԻՄԴ-ի, թե՛ ՄԻԵԿ-ի խտրականության բացառման դրույթների հիմքում ընկած ընդհանուր հասկացությունը համապատասխանաբար նման կամ համանման

¹⁰ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, ստորագրվել է 1950թ. նոյեմբերի 4-ին, ուժի մեջ է մտել 1953թ. սեպտեմբերի 3-ին: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԻԵԿ-ը 2002թ. ապրիլի 26-ին:

¹¹ Արձանագրություն թիվ 12-ը վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից 2004թ. դեկտեմբերի 17-ին:

¹² Եվրոպայի խորհուրդ, Եվրոպական սոցիալական խարտիա, Մաս V, Հոդված Ե, ընդունվել է 1996թ. մայիսի 3-ին: Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Եվրոպական սոցիալական խարտիան 2004թ. հունվարի 21-ին:

¹³ Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան ընդունվել է 1995թ. փետրվարի 1-ին: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Շրջանակային կոնվենցիան 1998թ. հուլիսի 20-ին:

¹⁴ CETS No. 210 ուժի մեջ է մտել 2014թ. օգոստոսի 1-ին: Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի վավերացրել Ստամբուլյան կոնվենցիան, բայց ստորագրել է այն 2018թ. հունվարի 18-ին:

¹⁵ 26-րդ հոդվածում նշվում է, որ «որևէ կարգի խտրականություն պետք է արգելվի օրենքով, և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից, ըստ որևէ հատկանիշի, այն է՝ ըստ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի»: Տե՛ս նաև ԲԲԻՄԴ 2-րդ հոդվածի 1 կետը որպես խտրականության բացառման ընդհանուր դրույթ, 3-րդ հոդվածը՝ որպես տղամարդկանց և կանանց համար իրավունքներից հավասար օգտվելու մասին ընդհանուր դրույթ, 23-րդ հոդվածի 4-րդ կետը՝ որպես ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում ամուսինների միջև խտրականության բացառման և 24-րդ հոդվածը՝ որպես երեխայի իրավունքներին վերաբերող դրույթներ: Նմանապես, 14-րդ հոդվածը նախատեսում է, որ «սույն Կոնվենցիայով սահմանված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց որևէ հատկանիշի, օրինակ սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային և սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության հետ առցանցվելու, սեփականության, ծննդի կամ այլ հանգամանքի հիման վրա խտրականության»:

¹⁶ Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի երեսուկյոթերորդ նստաշրջանում 1989թ. նոյեմբերի 10-ին ընդունված [Խտրականության բացառման մասին ընդհանուր մեկնաբանություն թիվ 18-ի](#) 7-րդ կետը: Տե՛ս նմանատիպ սահմանումները Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 1-ին հոդվածում և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 1-ին հոդվածում: Տե՛ս նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԿ), [Կոնստանտին Մարկինս ընդդեմ Ռուսաստանի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 30078/06, վճիռը՝ 2012թ. մարտի 22-ին), կետ 125, [X և այլք ընդդեմ Ավստրիայի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 19010/07, վճիռը՝ 2013թ. փետրվարի 19-ին), կետ 98, [Խամտոխու և Ակսենչիկն ընդդեմ Ռուսաստանի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 60367/08 և 961/11, վճիռը՝ 2017թ. հունվարի 24), կետ 64:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

իրավիճակում անձանց նկատմամբ «օբյեկտիվ կամ ողջամիտ» հիմքերից զերծ վերաբերմունքի որևէ տարբերություն կանխելն է:¹⁷

17. ԵԱՀԿ մակարդակում հիմնական հանձնառությունները, այդ թվում՝ նրանք, որոնք բխում են Հելսինկիի վերջնական ակտում ԵԱՀԿ-ի բուն ծագումից, վերաբերում են խտրականության բացառմանը, խտրականության կանխարգելմանն ու դրանից պաշտպանությանը: Մասնավորապես, ԵԱՀԿ մասնակից պետությունները հանձն են առել «հարգել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները (...) բոլորի համար առանց ռասայի, սեռի, լեզվի կամ կրոնի հատկանիշով տարբերակման»,¹⁸ «[...] գույնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ կարգավիճակի տարբերակման», և համաձայնել են, որ «այս իրավունքներից ու ազատություններից օգտվող, դրանցից օգտվելու մտադրություն հայտնող կամ օգտվել ձգտող ոչ մի անհատ կամ նրա ընտանիքի անդամ դրա հետևանքով չի ենթարկվի որևէ տեսակի խտրականության»¹⁹ միևնույն ժամանակ հանձնառություն ստանձնելով ապահովել «օրենքով հավասար պաշտպանություն» և «ցանկացած հիմքով խտրականությունից հավասար և արդյունավետ պաշտպանություն»:²⁰
18. Վիեննայի փաստաթուղթը նաև շեշտում է, որ ԵԱՀԿ մասնակից բոլոր պետությունները հանձնառու են ապահովել իրենց տարածքում և իրենց ընդդատության ներքո յուրաքանչյուր մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, առանց այնպիսի հատկանիշներով որևէ տարբերակման, ինչպիսիք են ռասան, գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային վիճակը, ծնունդը կամ որևէ այլ կարգավիճակ:²¹

¹⁷ Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի [խտրականության բացառման մասին ընդհանուր մեկնաբանություն թիվ 18-ի](#) կետ 13-ը և դրա ընդունման մասին որոշումը [Քայանին ընդդեմ Քայանիայի հաղորդակցություն թիվ 1021/2001](#), գործով, 2003թ. մարտի 28, կետ 4.3: Տե՛ս նաև, այլ տարբերակների փոխարեն, ՄԻԵԴ-ի վերջերս կայացրած վճիռը [Քարտունն ու այլ ընդդեմ Միացյալ Թագավորության](#) գործով (Հայցադիմում թիվ 42184/05, վճիռը՝ 2010թ. մարտի 16), կետ 61:

¹⁸ Եվրոպայում անվտանգության և համագործակցության համաժողով, Եզրափակիչ ակտ, Եվրոպայում անվտանգությանը վերաբերող հարցեր: 1(ա) «[Մասնակից պետությունների միջև հարաբերություններն ուղղորդող սկզբունքների հոչակագիր – Սկզբունք VII](#)», Հելսինկի, 1975թ.

¹⁹ [Վիեննայի ԵԱՀԿ ամփոփիչ փաստաթուղթ – հետագա քայլերի երրորդ հանդիպում](#), Եվրոպայում անվտանգությանը վերաբերող հարցեր: Սկզբունքներ, Վիեննա, 1989թ., կետ 13.7 և 13.8.

²⁰ Կոպենհագենյան փաստաթուղթ 1990թ, կետ 5.9, տե՛ս նաև Կոպենհագենյան փաստաթուղթ 1990թ, կետեր 25.3 և 25.4. «պարտավորություններից շեղում հանդիսացող միջոցառումները խստիվ կսահմանափակվեն այն շրջանակներում, որ պահանջում է դրության սրությունը» և «չեն հանգեցնի խտրականության՝ բացառապես ռասայական պատկանելության, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, սոցիալական ծագման կամ փոքրամասնությանը պատկանելու հիման վրա», ինչպես նաև [Հանդուրժողականության և խտրականության բացառման ԵԱՀԿ թիվ 10/05 որոշումը՝ Փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման մասին](#), MC.DEC/10/05, որն ընդունվել է Նախարարների խորհրդի կողմից Լյուբյանայում 2005թ. դեկտեմբերի 6-ին, կետեր 4, 5 և 5.1:

²¹ Տե՛ս տողատկի ծանոթագրություն 19-ում արդեն հղված աղբյուրի կետ 13.8 (Վիեննա, 1989թ.): 2003թ. դեկտեմբերի 2-ին ընդունված [Հանդուրժողականության և խտրականության բացառման մասին նախարարների խորհրդի 4/03 որոշումը](#) վերահաստատեց բոլոր մասնակից պետություններում խտրականության հետ կապված Նախարարների խորհրդի մտահոգությունները, իսկ [2004թ. հուլիսի 29-ի Մշտական խորհրդի հանդուրժողականության, ռասիզմի, օտարախոյզության և խտրականության դեմ պայքարի մասին թիվ 621 որոշումը](#) պարտավորեցրեց մասնակից պետություններին՝ դիտարկել խտրականությունը արգելող օրենսդրության կիրարկումը կամ ուժեղացումը, ըստ անհրաժեշտության:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

19. Եվրոպական միության օրենսդրության ներքո Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական միության խարտիան արգելում է խտրականությունը: Ի լրումն, բազմաթիվ դիրեկտիվներ արտացոլել են ԵՄ երկրների՝ բոլոր մարդկանց նկատմամբ հավասար վերաբերմունքը պաշտպանելու հանձնառությունը, մասնավորապես՝ «Աշխատանքում իրավահավասարության դիրեկտիվը» (Խորհրդի դիրեկտիվ 2000/78/EC)²², ինչպես նաև այն դիրեկտիվները, որոնք մասնավորապես ուղղված են տղամարդկանց և կանանց հավասար վերաբերմունքի պաշտպանությանը²³ և էթնիկ կամ ռասայական ծագումից անկախ հավասար վերաբերմունքին²⁴ (Խորհրդի դիրեկտիվ 2000/43/EC, այսուհետ՝ նաև «Ռասայական հավասարության դիրեկտիվ»): ԵՄ դիրեկտիվները նաև պարունակում են ուղղակի և անուղղակի խտրականության հստակ և կոնկրետ սահմանումներ, ինչպես նաև իրավական պաշտպանության միջոցների և իրավակիրարկման դրույթներ, խտրականության բացառման/իրավահավասարության մարմիններին ներկայացվող պահանջներ: Այս մարմինները կենտրոնանում են հավասար վերաբերմունքի խթանման և խտրականությունից պաշտպանության վրա:
20. Հաշվի առնելով այն, որ Օրենքի նախագծի նպատակն է հիմնել ըստ իրեն տրված մանդատի խտրականության բոլոր ձևերով զբաղվող իրավահավասարության մարմին և ապահովել այդ մարմնի անկախությունը, հաջորդիվ ներկայացվող առաջարկությունները նաև հղում կանեն, ըստ անհրաժեշտության, [Միացյալ Ազգերի Կազմակերպության մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային հաստատությունների կարգավիճակին վերաբերող սկզբունքներին](#) (կամ Փարիզյան սկզբունքներին),²⁵ որոնք սահմանում են այսպիսի մարմինների անկախությունն ու արդյունավորությունն ապահովելու նվազագույն չափորոշիչները:²⁶ Բացի այդ, 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթում ԵԱՀԿ մասնակից պետությունները հանձն են առել

²² Տե՛ս [Խորհրդի 2000թ. նոյեմբերի 27-ի 2000/78/EC դիրեկտիվը](#), որը սահմանում է աշխատանքի և զբաղվածության ոլորտում հավասար վերաբերմունքի ընդհանուր շրջանակ, այսուհետ՝ «Աշխատանքում իրավահավասարության դիրեկտիվ» կամ «Խորհրդի դիրեկտիվ 2000/78/EC»:

²³ [Եվրոպական խորհրդարանի և խորհրդի Դիրեկտիվ 2006/54/EC, 2006թ. հուլիսի 5](#) աշխատանքի և զբաղվածության ոլորտում տղամարդկանց և կանանց համար հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի սկզբունքների իրացման մասին, և [Խորհրդի Դիրեկտիվ 2004/113/EC, 2004թ. դեկտեմբերի 13](#), ապրանքների և ծառայությունների մատչելիության և մատակարարման գործում տղամարդկանց և կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքի մասին

²⁴ Տե՛ս [Խորհրդի դիրեկտիվ 2000/43/EC, 2000թ. հունիսի 29](#) անկախ ռասայական կամ էթնիկ ծագումից անձանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքի իրացման մասին

²⁵ Փարիզյան սկզբունքները սահմանվել են 1991թ. հոկտեմբերի 7 – 9-ը Փարիզում կայացած Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության համար ազգային հաստատությունների առաջին միջազգային աշխատաժողովի ընթացքում և ընդունվել են Մարդու իրավունքների կոմիտեի 1992/54 բանաձևով 1992թ. և Գլխավոր Ասամբլեայի 48/134 բանաձևով 1993թ.:

²⁶ Առաջարկությունները նաև հիմնված են [Հավասարմագրման ենթահանձնաժողովի ընդհանուր նկատառումների](#) վրա և ընդունվել են Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային դաշինքի բյուրոյի (GANHRI) կողմից, 2018թ. փետրվար ամսվա վերջին լրամշակումներով, որոնց հանդես են գալիս որպես Փարիզյան սկզբունքների մեկնաբանության գործիքներ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

«նպաստել մարդու իրավունքների և օրենքի գերակայության ոլորտում անկախ ազգային հաստատությունների հիմնմանը և հզորացմանը»:²⁷

2. Օրենքի նախագծի նպատակը և դրա կիրառման շրջանակը

21. Օրենքի նախագծի անվանումը և այլ դրույթներ (ինչպես օրինակ՝ Հոդված 1, կետ 1) հուշում են, որ նախագծի ընդհանուր նպատակն է «ապահովել իրավահավասարությունը»: Ավանդաբար, այս հասկացությունն ընկալվել է որպես պետական իշխանությունների պարտքը՝ ապահովելու օրենքի հավասար կիրարկումը.²⁸ ցանկացած ոք, ով հայտնվում է պետական պաշտոնյաների/մարմինների առջև, պետք է արժանանա հավասար վերաբերմունքի: 3-րդ հոդվածի 1-ին կետն էլ ավելի է մասնավորեցնում առ այն, որ խտրականությունն արգելվում է «քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հանրային կյանքի այլ բնագավառներում»: Մինևույն ժամանակ, այնուամենայնիվ, Օրենքի նախագծի գործողության շրջանակը ընդլայնվում է՝ ներառելով նաև մասնավոր հատվածը: Այսպիսով, թյուր մեկնաբանություններից և շփոթություններից խուսափելու համար խորհուրդ է տրվում վերանայել անվանումը և ապահովել, որ այն համապատասխանում է ընդհանուր նպատակին և խտրականության դեմ ուղղված օրենսդրական նախաձեռնության շրջանակին:
22. Մասնավորապես խտրականությանը վերաբերող ՄԱԿ-ի կոնվենցիաները և պայմանագրերը, ինչպես օրինակ՝ ՌԽՎԿ և ԿԽՎԿ-ը իրենց անվանման մեջ չեն գործածում «իրավահավասարություն» եզրը, այլ նախընտրում են «խտրականության վերացում» եզրերը: ՔՔԻՄԴ-ի Հոդված 26-ը նշում է թե՛ իրավահավասարության հասկացությունները, թե՛ խտրականությունն արգելելու պետությունների պարտավորությունը, այս կերպ հուշելով, որ սրանք երկու տարբեր հասկացություններ են:²⁹ Ինչ վերաբերում է ԵՄ դիրեկտիվներին, դրանք հղում են անում «հավասար վերաբերմունք» կամ «հավասար հնարավորություններ» հասկացությանը:³⁰ Այս բոլոր տարրերը

²⁷ Տե՛ս ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի (1990) կետ 27-ը:

²⁸ Տե՛ս D. Alland and S. Rials (eds), *Dictionnaire de la culture juridique*, Paris, P.U.F., 2003, էջեր 585-586. Տե՛ս օրինակ՝ Լիտվայի Սահմանադրության 29-րդ հոդվածը, որը սահմանում է. «Բոլոր մարդիկ պետք է հավասար լինեն օրենքի, դատարանի, պետական այլ հաստատությունների և պաշտոնյաների առջև»: Լիտվայի սահմանադրական դատարանը շեշտել է, որ այս դրույթը նշանակում է, որ բոլորի հավասարության սկզբունքը պետք է պահպանվի օրենքներ ընդունելիս և դրանց կիրառելիս, ինչպես նաև արդարադատություն իրականացնելիս (2004թ. հունվարի 30-ի և 2003թ. դեկտեմբերի 3-ի որոշումները և այլն):

²⁹ «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք. այդ առնչությամբ որևէ կարգի խտրականություն պետք է արգելվի օրենքով, և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից, ըստ որևէ հատկանիշի, այն է՝ ըստ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի»:

³⁰ [Խորհրդի դիրեկտիվ 2000/43/EC-ը \(հունիսի 29, 2000թ.\) ներդնում է անձանց նկատմամբ ռասայական և էթնիկ ծագումից անկախ հավասար վերաբերմունքի սկզբունքը](#) (այսուհետ՝ Դիրեկտիվ 2000/43); [Խորհրդի դիրեկտիվ 2000/78/EC-ը \(2000թ. նոյեմբերի 27\) սահմանում է աշխատանքի և գրաղվածության ոլորտում հավասար վերաբերմունքի ընդհանուր շրջանակը](#) (այսուհետ՝ Դիրեկտիվ 2000/78); [Խորհրդի դիրեկտիվ 2004/113/EC-ը \(2004թ. դեկտեմբերի 13\) սահմանում է](#)

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

հիմնավորում են այն տեսակետը, որ «իրավահավասարություն» եզրը խիստ սահմանափակող է՝ ներկայիս Օրենքի նախագծի առարկան և նպատակը նկարագրելու համար:

23. Թեև Օրենքի նախագիծն ունի կիրառության լայն դաշտ (ըստ Հոդված 3-ի՝ հանրային կյանքի բոլոր ոլորտներում), «հանրային կյանք» արտահայտությունը կարող է սահմանափակող մեկնաբանությունների տեղիք տալ: Թեև ճշմարիտ է, որ ՌԽՎԿ-ի Հոդված 1 կետ 1-ը վերաբերում է «հանրային կյանքին», ավելի նոր ԵՄ կոնվենցիաներում խտրականության վերաբերմամբ այս արտահայտությունն այլևս չի գործածվում:³¹ Թե՛ ԿԽՎԿ-ը, թե՛ ՀԱԻԿ-ը գործածում են «քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ որևէ այլ ոլորտում» եզրերը (ԿԽՎԿ-ի Հոդված 1 և ՀԱԻԿ-ի Հոդված 2) «հանրային կյանքի այլ ոլորտներ» ձևակերպման փոխարեն: Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) իր Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականում այլ ձևակերպում է գործածում: Այն նշում է, որ օրենքը պետք է նախատեսված լինի խտրականության արգելքի կիրառումը «թե՛ հանրային, թե՛ մասնավոր հատվածներում, բոլոր ոլորտներում» (կետ 7):³² ԲԲԻՄԴ-ում, ԿԽՎԿ-ում, ՀԱԻԿ-ում կամ ՌԱԵՀ-ի Ընդհանուր քաղաքականության հանձնարարականում գործածված ձևակերպումը համակողմանի և ավելի պատշաճ է ներկայանում՝ արգելված խտրական վերաբերմունքի կիրառման շրջանակը նկարագրելու նպատակների համար:
24. Թվում է՝ չկա ողջամիտ որևէ հիմնավորում՝ սահմանափակելու խտրականության արգելքը միայն «հանրային կյանքի» նկատմամբ: Գերադասելի է ներմուծել խտրականության արգելքի ընդհանուր դրույթ: ԲԲԻՄԴ-ի 26-րդ հոդվածում գործածված ձևակերպումը կարող է օգտակար լինել. «որևէ կարգի խտրականությունն պետք է արգելվի օրենքով, և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից [...]»:
25. **Օրենքի նախագծի նպատակին և գործնականում մասնավոր հատվածի վրա տարածվող դրա գործողության շրջանակին համապատասխանաբար՝ անդրադառնալու համար առաջարկվում է վերանայել օրենքի անվանումը՝ հստակեցնելու, որ այն երաշխավորում է հավասար վերաբերմունք և հավասար հնարավորություններ խտրականության բացառման պայմաններում յուրաքանչյուր անձի և քաղաքացու իրավունքների և**

[պարանքների և ծառայությունների մատչելիության և մատակարարման գործում տղամարդկանց և կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը](#) (այսուհետ՝ Դիրեկտիվ 2004/113):

³¹ Հարկ է նշել, որ եզրը լայնորեն է մեկնաբանվել Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովի կողմից: Տե՛ս P. Thornberry, *The International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination. A commentary*, Oxford, Oxford University Press, 2016, էջ 130-131.

³² Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով (ՌԱԵՀ), [Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարական Ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի ազգային օրենսդրության մասին](#), կետ 7, ընդունվել է 2002թ. (2017թ. լրամշակմամբ):

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

ազատությունների ճանաչման, իրականացման և օգտագործման առումով: Այնուհետ, խորհուրդ է տրվում 3-րդ հոդվածի 1-ին կետով հղում անել երկուսին էլ՝ «հանրային և մասնավոր հատվածներին», երբ սահմանվում է խտրականության արգելքի կիրառման շրջանակը: ԿԽՎԿ-ի, ՀՄԻԿ-ի և ՌԱԵՀ-ի Ընդհանուր քաղաքականության հանձնարարականների համապատասխան դրույթները կարող են օգտակար լինել՝ հանդես գալով որպես օրինակներ:

26. Օրենքի նախագծի Գլուխ 2-ը նշում է երեք առանձին ոլորտ, որոնցում արգելվում է խտրականությունը՝ աշխատանքային հարաբերություններում (Հոդված 9), հանրությանը հասանելի ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ժամանակ (Հոդված 10) և տնտեսական գործունեությամբ զբաղվելիս (Հոդված 11): Այս Հոդվածների մշակման ժամանակ պահպանված չէ մոտեցման հետևողականությունը, քանի որ դրանք ներկայանում են ճշգրտության տարբեր աստիճաններով և գործունեության տարբեր շրջանակներով:
27. 9-րդ հոդվածը կարծես հետևում է ԱՄԿ-ի 1958թ. Կոնվենցիային (թիվ 111), որը վերաբերում է «Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականությանը»: Հարկ է շեշտել, որ վերոնշյալ Հոդվածի 2-րդ կետը թվարկում է «աշխատանքային հարաբերությունների» կոնկրետ ոլորտներ, որտեղ արգելվում է խտրականությունը (օրինակ՝ աշխատանքի հայտարարությունները, մրցույթը, փորձաշրջանը և վերապատրաստումը, աշխատանքային պայմանները, աշխատավարձը և այլն): Այնուամենայնիվ, Հոդված 10 և 11-ը ավելի ընդհանրական են՝ դնելով խտրականության արգելքը «այնպիսի իրավահարաբերությունների վրա, որոնք ձևավորվում են հետևյալ ոլորտներում՝ ապրանքներ և ծառայություններ առաջարկելիս» (օրինակ՝ հանրային ծառայություններ, բնակչության բժշկական օգնություն, սոցիալական ապահովություն, բանկային ծառայություններ, տրանսպորտային ծառայություններ, կրթությունն ու գիտություն, զանգվածային լրատվություն) և տնտեսական գործունեությամբ զբաղվելիս (ներառյալ՝ բիզնեսի գրանցումը, հարկումը, գործունեության կասեցումը կամ դադարեցումը, ինչպես նաև լուծարումը): 10-րդ հոդվածի 2-րդ կետը նաև կարծես հուշում է, որ խտրականության արգելքը կիրառելի է միայն «իրավահարաբերությունների» նկատմամբ, այնինչ այսպիսի ձևակերպում առկա չէ 9-րդ և 11-րդ հոդվածներում:
28. Ավելին, 10-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին ենթակետն արգելում է առհասարակ «հանրային ծառայություններում» խտրականությունը, այսպիսով հուշելով, որ 2–10 ենթակետերը կարող են վերաբերել մասնավոր հատվածի ծառայություն մատուցողներին: Այնուամենայնիվ, իրականում կարծես այդպես չէ, քանի որ այս պարբերություններում ներառված են բնակչության բժշկական օգնությունը, սոցիալական ապահովությունը,

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

ինչպես նաև այլ ոլորտներ, որտեղ պետությունը նույնպես կարող է առաջարկել հանրային ծառայություններ:

29. Օրենքի նախագծի տեքստից 10-րդ և 11-հոդվածների միջև հարաբերությունը կամ տարբերությունը նույնպես բավականաչափ պարզ չէ: Ըստ 11-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ ենթակետի խտրականությունն արգելված է հարկային և վարկային քաղաքականությունում, այնինչ 10-հոդվածի 2-րդ կետի չորրորդ ենթակետն արգելում է խտրականությունը բանկային ծառայություններում, դրամաշնորհների, վարկերի, ապառիկի տրամադրման, ֆինանսական ծառայությունների մատուցման ժամանակ: Նույնը վերաբերելի է նաև 11-րդ հոդվածի 1-ին կետի առաջին և երրորդ ենթակետերին և 10-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին ենթակետին: Պարզ չէ, թե ըստ 10-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին ենթակետի որն է իրավաբանական անձի և անհատի՝ որպես «հանրային ծառայություն» ներկայացված գրանցման տարբերությունը:
30. Օրենքի նախագծի մի շարք դրույթներ և եզրեր հստակ չեն: Օրինակ՝ 10-րդ և 11-րդ հոդվածները վերաբերում են «ապրանքներ և ծառայություններ առաջարկելիս» ձևավորվող «իրավահարաբերություններին» և «հանրությանը հասանելի ապրանքներին և ծառայություններին»:³³ Այսպիսի աղոտ եզրերը կարող են բավականին խնդրահարույց լինել իրավաչափության սկզբունքի առումով, որը նույնպես պահանջում է օրենքի կանխատեսելիություն, հատկապես՝ 3-րդ հոդվածի 2-րդ կետի համատեքստում, որը սույն Օրենքի նախագծի պահանջների խախտման համար պատասխանատվության այլ տեսակների հնարավորություն է ստեղծում:
31. Պարզ չէ Օրենքի նախագծի 10-րդ և 11-րդ հոդվածներով խտրականության արգելքի համար կոնկրետ ոլորտների ընտրողական և սպառիչ ցանկի տրամադրման պատճառը: Այսպիսի ցանկի առկայությունը կարող է այս օրենքի տիրույթից դուրս թողնել մի շարք այլ ոլորտներ, որոնք թվարկված չեն այս Հոդվածներում, և առաջարկվում է վերանայել այն հստակեցնելով, որ տրամադրված ցանկերը պարզապես խտրականությունն արգելքի տիրույթում գտնվող ոլորտների ոչ սպառիչ օրինակներ են: Բացի այդ, առաջարկվում է հստակեցնել 10-րդ և 11-րդ հոդվածների շրջանակը, ինչպես նաև այնպիսի եզրերը, ինչպիսիք են «ապրանքներ և ծառայություններ առաջարկելիս» ձևավորվող «իրավահարաբերությունները», «հանրությանը հասանելի ապրանքներ և ծառայությունները»:

³³ ԵՄ Դիրեկտիվ 2000/43/EC-ը այս իմաստով նշում է «հանրությանը հասանելի ապրանքների և ծառայությունների, այդ թվում՝ բնակարանի մատչելիությունը և մատակարարումը»: Բացի այդ, ԵՄ Դիրեկտիվ 2004/113/EC այս հասկացությունը ճշգրտում է հետևյալ կերպ. «(...) սույն Դիրեկտիվը կիրառվում է հանրությանը հասանելի ապրանքներ մատակարարող և ծառայություններ մատուցող բոլոր անձանց նկատմամբ՝ անկախ խնդրո առարկա անձի հանրային կամ մասնավոր հատված, այդ թվում նաև հանրային կառույց ներկայացնելուց, անձնական կամ ընտանեկան կյանքի տարածքից դուրս ապրանքների և ծառայությունների մատուցման և այս համատեքստում իրականացվող գործարքների նկատմամբ»:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

3. Թույլատրելի տարբերակումները

32. 3-րդ և 4-րդ հոդվածները Օրենքի նախագծի կենտրոնական դրույթներն են, քանի որ ստեղծում են թույլատրելի տարբերակման չափորոշիչներ՝ ներմուծելով խտրականության տարբեր սահմանումներ և տարբերակված վերաբերմունքի գնահատման չափանիշներ: 3-րդ հոդվածի երրորդ կետով սահմանվում է տարբերակված վերաբերմունքն արդարացնող ընդհանուր դրույթ, նախատեսելով, որ եթե որոշ պայմաններ բավարարված են՝ իրավաչափ նպատակի առկայություն, ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտություն, միջոցների համաչափություն և համապատասխանություն, ապա վերաբերմունքի մեջ տարբերությունը չպետք է դիտարկվի որպես խտրականություն:³⁴
33. 4-րդ հոդվածը սահմանում է խտրականությունը և դրա տեսակները և ներմուծում է իրավաչափության, անհրաժեշտության և համաչափության փորձարկումը որպես բուն խտրականության սահմանման անքակտելի մաս:³⁵ Այնուամենայնիվ, Օրենքի նախագիծն անհետևողական է եզրութաբանական գործածության առումով՝ տարբերակված վերաբերմունքը սահմանելով որպես *prima facie* (առերևույթ) խտրականություն: Թեև անուղղակի խտրականության և սեգրեգացիայի սահմանումները հղում են անում իրավաչափությանը, անհրաժեշտությանը և համաչափությանը (5-րդ հոդված, 1-ին կետ, ենթակետեր 3 և 7), ուղիղ խտրականության սահմանումը (ենթակետ 3) այսպիսի ոչ մի հղում չի պարունակում և նաև տարբերվում է 3-րդ և 4-րդ հոդվածների համապատասխան դրույթներից: Ավելին, 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված սահմանափակումներն արդարացնող չափանիշների սահմանումը նույնը չէ 3-րդ հոդվածի երրորդ կետում թվարկվածի հետ: 3-րդ հոդվածը վերաբերում է այն սահմանափակումներին, որոնք իրավաչափ են, «համաչափ և համապատասխան», այնինչ 4-րդ հոդվածը խոսում է «օբյեկտիվ հիմքի», «նպատակի ու ընտրված միջոցների միջև ողջամիտ համաչափության պայմանների» մասին: Այս ամենը կարող է շփոթություն առաջ բերել այս դրույթների իմաստների ընկալման և գործնականում սահմանումների կիրառման առումով:
34. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն նշում է, որ վերաբերմունքի տարբերակվածությունը խտրականությունն չէ ՔՔԻՄԴ-ի 26-րդ հոդվածի

³⁴ Ամբողջովին պարզ չէ, թե արդյոք էական տարբերություն կա համաչափության և համապատասխանության միջև և արդյոք երկու դասակարգումներն էլ կենտրոնացած են մի կողմից իրավաչափ նպատակի և մյուս կողմից տարբերակվածության փոխհարաբերության վրա:

³⁵ 4-րդ հոդվածի առաջին կետ. «Խտրականությունը գործողություն, անգործություն կամ կարգավորում է, որն արտահայտվել է անձի իրավունքների և ազատությունների տարբերակմամբ, բացառմամբ, սահմանափակմամբ կամ նախապատվությամբ, երբ՝ առկա չէ օբյեկտիվ հիմք և հետապնդվող իրավաչափ նպատակի, ժողովրդավարական հասարակությունում դրա անհրաժեշտության և նպատակի ու ընտրված միջոցների միջև ողջամիտ համաչափության պայմանները՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից՝ իրական կամ ենթադրյալ»:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

ներքո, «եթե այսպիսի տարբերակման չափանիշները ողջամիտ են և օրյեկտիվ և եթե հետապնդվում է այնպիսի նպատակ, որն օրինաչափ է Դաշնագրի ներքո»:³⁶ Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (այսուհետ՝ «ՄԻԵԴ»), Պայմանագրին միացող պետությունն ունի հայեցողության սահման³⁷ գնահատելու, թե արդյոք և որչափ են այլ իմաստներով նմանատիպ իրադրություններում տարբերությունները արդարացնում տարբեր վերաբերմունքը:³⁸ Այնուամենայնիվ, եթե հարցը վերաբերում է խտրականության որոշ հիմքերի, մասնավորապես՝ ռասային կամ էթնիկ պատկանելությանը, գենդերին, սեռական կողմնորոշմանը և հաշմանդամությանը, ապա պետության հայեցողականությունը սահմանափակվում է: ԵՄ օրենսդրությամբ ուղղակի և անուղղակի խտրականության դեպքերի գնահատման համար կիրառվող ստուգումների և փորձարկումների մակարդակը տարբեր է: Խտրականության որոշ հիմքերի դեպքում ճանաչվել է պաշտպանության հատկապես բարձր մակարդակի ապահովման անհրաժեշտությունը: Սա հատկապես ճշմարիտ է գենդերի, ռասայի, էթնիկ և ծագման հատկանիշների վերաբերմամբ:

35. ԵՄ օրենսդրության ներքո վերաբերմունքի անուղղակի տարբերությունը չպետք է խտրականություն համարվի, եթե խնդրո առարկա դրույթը, չափանիշը կամ աշխատակարգը օրյեկտիվորեն հիմնավորվում են իրավաչափ նպատակով, իսկ այդ նպատակին հասնելու միջոցները համապատասխան են և անհրաժեշտ:³⁹ Հակադրության միջոցով վերաբերմունքի ուղղակի տարբերությունների համար ընդունված հիմնավորումները տարբերվում են՝ կախված հիմքից և խնդրո առարկա ոլորտից:⁴⁰ Օրենքի նախագծից պարզ չի դառնում, արդյոք կա օրենսդրական

³⁶ ՄԱԿ-ի ՄԻԿ, [խտրականության բացառման մասին ընդհանուր մեկնաբանություն թիվ 18](#), կետ 13:

³⁷ ՄԻԵԴ-ի կողմից մշակված հայեցողության սահմանի դոկտրինը: Օրինակ՝ տես հետևյալ գործերը՝ [Պակասան ընդդեմ Լիտվայի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 34932/04, վճիռը՝ 2011թ. հունվարի 6), կապված ընտրելու և ընտրվելու իրավունքի հետ, կետ 96, [Վայլիանատուն ընդդեմ Հունաստանի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 29381/09 և թիվ 32684/09, վճիռը՝ 2013թ. նոյեմբերի 7), կապված նույնի սեռի և տարբեր սեռերի զույգերի զուգընկերության համաձայնությունների խտրական կարգավորումը, կետ 76 և այլն: ՄԻԵԴ-ը սահմանել է, որ օրենքի իրականացման ժամանակ վերաբերմունքի տարբերակումը չի խախտում ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածը, եթե այն հետապնդում իրավաչափ նպատակ և եթե կա համաչափության խելամիտ հարաբերակցություն գործածված միջոցների և հետապնդվող նպատակի միջև (տե՛ս օրինակ՝ [Բեյգիայում լեզվի գործը](#) (թիվ 2) (Հայցադիմումներ թիվ 1474/62 և այլք, վճիռը՝ 1968թ. հուլիսի 23), կետ 10:

³⁸ Տե՛ս ՄԻԵԴ-ի գործերը՝ [Բրդդինն ընդդեմ Միացյալ Թագավորության](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 13378/05, վճիռը՝ ապրիլի 29, 2008թ.), կետ 60, [Շալկը և Կոպֆն ընդդեմ Ավստրիայի](#) (Հայցադիմում թիվ 30141/04, վճիռը՝ հունիսի 24, 2010թ.), կետ 96, և [X-ը և այլք ընդդեմ Ավստրիայի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 19010/07, վճիռը՝ փետրվարի 19, 2013թ.), կետ 98, և այլն:

³⁹ Հարկ է նշել, որ ըստ ԵՄ կանոնակարգերի, վերաբերմունքի անուղղակի տարբերակումները չպետք է համարվեն խտրականություն, եթե համապատասխան դրույթը, չափանիշը կամ աշխատակարգն օրյեկտիվորեն հիմնավորված են իրավաչափ նպատակով, իսկ այդ նպատակին հասնելու միջոցները համապատասխան են և անհրաժեշտ, իսկ վերաբերմունքի ուղղակի տարբերությունների դեպքում ընդունված հիմնավորումները տարբերվում են՝ կախված խնդրո առարկա հիմքից և բնագավառից: Տե՛ս օրինակ [Դիրեկտիվ 2000/78 Հոդված 2\(բ\)\(1\)](#): Տե՛ս նաև [Դիրեկտիվ 2000/78 Հոդված 2\(բ\)\(2\)](#), որը լրացուցիչ հիմնավորող դրույթ է հավելում՝ կապված աշխատանքի և զբաղվածության բնագավառում հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցման միջոցառումներն իրականացնելու պարտավորության հետ:

⁴⁰ Ուղղակի խտրականությունը, ինչպես սահմանված է [Դիրեկտիվներում](#), տեղի է ունենում այն ժամանակ, երբ մի անձի նկատմամբ վերաբերմունքը պաշտպանված հատկանիշների հիմքով նվազ բարենպաստ է՝ համեմատած մեկ այլ անձի հետ, որը գտնվում է, գտնվել է կամ կարող էր գտնվել համանման իրավիճակում:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

մտադրություն՝ տարբերակել ուղղակի կամ անուղղակի խտրականությունը և ապա սահմանել մեկ այլ իրավական փորձարկում (իրավական հիմքեր)՝ գտնելու օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում վերաբերմունքի տարբերակվածության յուրաքանչյուր տեսակի համար: Սույն օրենքի դրույթները կիրառելիս՝ վարչական և դատական մարմինները պետք է կարողանան ճանաչել պաշտպանության ավելի բարձր մակարդակի անհրաժեշտությունը և այդ իսկ պատճառով հիմնավորման ավելի խիստ չափորոշիչը:

36. Ըստ ՄԻԵԴ-ի, «այն դեպքերում, երբ վերաբերմունքի մեջ տարբերությունը հիմնված է ռասայական կամ էթնիկ պատկանելության վրա, օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում հասկացությունը հարկ է մեկնաբանել հնարավորինս խիստ»:⁴¹ «Ռասայական խտրականությունը խտրականության առանձնակի վիրավորական տեսակ է, և հաշվի առնելով դրա վտանգավոր հետևանքները, իշխանություններից պահանջվում է առանձնահատուկ զգոնություն և ակտիվ արձագանքում»:⁴² Նույն տրամաբանությամբ ՄԻԵԴ-ը նշել է, որ «այսօր գենդերային հավասարության առաջխաղացումը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների հիմնական նպատակներից է» և որ հարկ կլինի բերել «շատ ծանրակշիռ պատճառ», նախքան սեռի հատկանիշի հիման վրա վերաբերմունքի տարբերությունը «հնարավոր կլինի դիտարկել որպես Կոնվենցիայի հետ համատեղելի»:⁴³
37. Նաև հաստատվել է, որ հարկ կլինի բերել «շատ ծանրակշիռ պատճառներ»՝ հիմնավորելու բացառապես ազգության,⁴⁴ սեռական կողմորոշման⁴⁵ և հաշմանդամության⁴⁶ հատկանիշներով վերաբերմունքի տարբերությունը:
38. Վերոնշյալի հիման վրա առաջարկվում է բացառել իրավաչափության, անհրաժեշտության և համաչափության փորձարկումներին հղումը *prima facie* խտրականության սահմանումից, առանձին ներկայացնել փորձարկման ամբողջական և համակողմանի սահմանում, որը գերադասելիորեն ցույց կտա, որ պահանջվում է ստուգումների ավելի բարձր աստիճան, երբ քննվում է որոշ, օրինակ՝ զենդերի, ռասայի կամ էթնիկ ծագման, սեռական

⁴¹ Տե՛ս օրինակ՝ ՄԻԵԴ, [Սեդիչը և Ֆինչին ընդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի](#) (Հայցադիմում թիվ 27996/06 և թիվ 34836/06, վճիռը՝ 2009թ. դեկտեմբերի 22):

⁴² ՄԻԵԴ, [Տիմոնիև ընդդեմ Ռուսաստանի](#) (Հայցադիմում թիվ 55762/00 և թիվ 55974/00, վճիռը՝ 2005թ. դեկտեմբերի 13), կետ 56:

⁴³ ՄԻԵԴ, [Էմել Բոյրազն ընդդեմ Թուրքիայի](#) (Հայցադիմում թիվ 61960/08, վճիռը՝ 2014 դեկտեմբերի 2), կետ 51:

⁴⁴ Տե՛ս օրինակ՝ ՄԻԵԴ, [Գալոսազն ընդդեմ Ավստրիայի](#) (Հայցադիմում թիվ 17371/90, վճիռը՝ 1996թ. սեպտեմբերի 16), կետ 42:

⁴⁵ Տե՛ս օրինակ՝ ՄԻԵԴ, [Է.Բ. -ն ընդդեմ Ֆրանսիայի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 43546/02, վճիռը՝ 2008թ. հունվարի 22), կետ 91:

⁴⁶ Տե՛ս օրինակ՝ ՄԻԵԴ, [Գլորն ընդդեմ Շվեյցարիայի](#) (Հայցադիմում թիվ 13444/04, վճիռը՝ 2009թ. ապրիլի 30), կետ 84 (ֆիզիկական հաշմանդամություն) և ՄԻԵԴ, [Ալախտու Քիսն ընդդեմ Հունգարիայի](#) (Հայցադիմում թիվ 38832/06, վճիռը՝ 2010թ. մայիսի 20), կետ 42 (հոգեկան հաշմանդամություն): Տե՛ս նաև, օրինակ, ՄԻԵԴ-ի գործերը՝ [Կարնեթն ընդդեմ Ավստրիայի](#) (Հայցադիմում թիվ 40016/98, վճիռը՝ 2003թ. հուլիսի 24), կետեր 37 և 42, և [X-ը և այլք ընդդեմ Ավստրիայի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 19010/07, վճիռը՝ 2013թ. փետրվարի 19), կետ 99:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

կողմնորոշման և հաշմանդամության հատկանիշներով ուղղակի խտրականությունը:⁴⁷

4. Խտրականության և արգելված հիմքերի սահմանումը

39. 4-րդ հոդվածը պարունակում է շատ կարևոր դրույթներ, որոնք կարող են որոշել սույն Օրենքի նախագծի ընդհանուր ազդեցությունը, սահմանում է արգելված խտրականության տեսակներն ու հիմքերը: Կարևոր է այն, որ Օրենքի նախագիծը բացահայտ կերպով արգելում է խտրականությունը ենթադրյալ հատկանիշի հիման վրա (4-րդ հոդվածի 1-ին կետի վերջին բառը) և զուգորդված (ասոցացված) խտրականությունը (4-րդ հոդվածի 2-րդ կետ) և նաև զգայուն է գենետիկական հատկանիշների, հաշմանդամության և այլ հիմքերով խտրականության նկատմամբ: Ավելին, այն հղում է անում «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներին», ինչը, ըստ ՄԻԵԿ-ի Արձանագրություն 12-ի, մեծապես ընդլայնում է խտրականության արգելքի տիրույթը: Այս ամենը համապատասխանում է խտրականության դեմ օրենքի միջազգային զարգացումներին, որը ճանաչել է խտրականության այս կոնկրետ ձևերը: Վերոնշյալ բոլոր դրույթները Օրենքի նախագծի դրական տարրերն են:
40. 4-րդ հոդվածի առաջին կետը խտրականությունը սահմանում է որպես գործողություն, անգործություն կամ կարգավորում, որը դրսևորվել է «անձի իրավունքների և ազատությունների» տարբերակմամբ, բացառմամբ, սահմանափակմամբ կամ նախապատվությամբ: Այս սահմանման համար շահեկան կլինեին մի շարք հստակեցումներն ու վերանայումները:
41. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն թիվ 18-ը սահմանում է խտրականությունը որպես Հոդված 26-ում հիշատակված պաշտպանված հիմքերի ցանկի վրա հիմնված «ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն», որի նպատակը կամ հետևանքը բոլոր իրավահավասար անձանց բոլոր իրավունքների և ազատությունների ճանաչումը, իրականացումը կամ օգտագործումը չէղյալ հայտարարելը կամ նվազեցնելն է:⁴⁸ ԵՄ-ի հավասարության դիրեկտիվները հղում են անում իրավիճակների, «որոնցում մի մարդու նկատմամբ վերաբերմունքը նվազ բարենպաստ է, քան մյուսի նկատմամբ այդ պահին

⁴⁷ «Իբրևել ուայթս թրասթ» կազմակերպության *«Հավասարության սկզբունքների հրչակագրի»* նպատակը հարում է նույն ուղղությանը՝ պահանջելով ավելի խիստ սահմանված աչափանիշներ ուղղակի խտրականության դեպքում, տե՛ս Սկզբունք 5 կետ 5-ի երկրորդ նախադասությունը: Տե՛ս նաև ՄԻԵԿ-ի գործը՝ *Դ.Զ. և այլք քննդեմ Չեխիայի Հանրապետության* [ՄՊ] (Հայցադիմում թիվ 57325/00, վճիռը՝ 2007թ. նոյեմբերի 13), կետ 208, որտեղ Դատարանը նշել է. «Այս հանգամանքներում և չնայած Չեխիայի իշխանությունների գնչու երեխաների համար կրթության ապահովման ջանքերի գիտակցմանը, Դատարանը համոզված չէ, որ գնչու երեխաների և ոչ գնչու երեխաների հանդեպ վերաբերմունքի տարբերությունը օբյեկտիվորեն կամ ողջամտորեն հիմնավորված է և որ օգտագործված միջոցների և հետապնդվող նպատակի միջև առկա էր ողջամիտ համաչափ հարաբերակցություն»:

⁴⁸ ՄԱԿ-ի ՄԻԿ, *Խտրականության բացառման մասին ընդհանուր մեկնաբանություն թիվ 18*, կետ 7:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

- դրսևորվող, նախկինում դրսևորված կամ հավանաբար դրսևորվելիք վերաբերմունքը համանման իրավիճակում»:⁴⁹
42. Միջազգային այնպիսի պայմանագրերը, ինչպիսիք են ՌԽՎԿ, ԿԽՎԿ և ՀԱԻԿ-ը սահմանում են խտրականությունը որպես «[համապատասխան արգելված հիմքերով] ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որն ունի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հավասար հիմքերով ճանաչումը, իրականացումը կամ օգտագործումը չեղյալ հայտարարելու կամ նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում է այդպիսի հետևանքների»: Այսպիսով, «իրավունքների և ազատությունների ճանաչումը» հասկացությունները սովորաբար մասնավորեցնում են խտրականության իմաստը:
43. Ավելին, կարևոր է հստակեցնել, որ պարտադիր չէ, որ որոշումը, քաղաքականությունը կամ աշխատակարգը միտումնավոր կերպով խտրական լինեն՝ խտրականություն պարունակելու համար. ցանկացած միջոց կարող է հանգեցնել խտրականության, եթե այն ունի խտրականություն առաջ բերելու ազդեցություն, անկախ այդ միջոցը գործադրող անձի մտադրությունից:
44. Թեև պետությունների համար պարտադիր չէ որդեգրել միջազգային պայմանագրերում տրված ճիշտ նույն սահմանումը, սահմանումը պետք է բավականին ընդարձակ լինի՝ ներառելու տարբեր գործիքներով նախատեսված բաղադրիչները: **Այդ իսկ պատճառով և այս նկատառումից ելնելով՝ առաջարկվում է վերանայել 4-րդ հոդվածի առաջին կետը, հստակեցնել վերոնշյալ սահմանումները խուսափելու օրենքում և գործնականում հնարավոր հակասություններից և միջազգային նորմերի խախտումներից:**⁵⁰
45. Հարկ է նաև նկատի առնել, որ ոչ այս Օրենքի նախագիծը, ոչ միջազգային պայմանագրերի և կոնվենցիաների դրույթները չեն սահմանում խտրականությունն արգելքի պաշտպանված հիմքերի սպառիչ ցանկ: Այնուամենայնիվ, միջազգայնորեն խտրականություն համար հատկապես հավանական ճանաչված մի շարք հիմքեր ներառված չեն այս ցանկում:
46. Հայաստանի դեպքում ՌԱԵՀ-ը մասնավորապես առաջարկում է խտրականության արգելված հիմքերի ցանկում ներառել սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը, ազգային ծագումը և ազգությունը

⁴⁹ Երկու ԵՄ Դիրեկտիվներում էլ Հոդված 2-ը:
⁵⁰ Տե՛ս ՄԻԵԴ-ի գործը՝ [Սերիոս և Ֆինչին ընդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի](#) (Հայցադիմում թիվ 27996/06 և թիվ 34836/06, վճիռը՝ 2009թ. դեկտեմբերի 22), որտեղ առաջին անգամ սահմանվեց Արձանագրություն թիվ 12-ի § 1-ի խախտումը խորհրդարանական ընտրությունների մասնակցելու հնարավորությանը վերաբերող ազգային օրենսդրության մասով (մի շարք ազգային փոքրամասնություններ բացառված էին):

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

(որն ընկալվում է որպես քաղաքացիություն):⁵¹ Ավելին, սեռական կողմնորոշումը ճանաչված է որպես խտրականության արգելված հիմք ԵՄ օրենքներում:

47. ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում ճանաչել է, որ ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածով սահմանված խտրականությունից պաշտպանությունը ներառում է նաև ազգության, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքերը, չնայած դրանք բացահայտ կերպով նշված չեն այս դրույթում:⁵² Ազգության և սեռական կողմնորոշման հիմքերը ճանաչվել են ՄԻԵԴ-ի կողմից, ավելին՝ դրանք ճանաչվել են որպես բարձր մակարդակի պաշտպանություն պահանջող հիմքեր:⁵³ Ի վերջո, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը,⁵⁴ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վերաժողովը,⁵⁵ և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը⁵⁶ կոչ են արել պետություններին՝ ապահովել գենդերային ինքնության ներառումը խտրականությունը բացառող օրենսդրությամբ նախատեսված արգելված հիմքերում:⁵⁷ Ինչ վերաբերում է Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց հետ կապված իրավիճակին, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը 2018թ. գործունեության 3-րդ եռամսյակային զեկույցում բացահայտ կերպով հորդորում է Հայաստանի կառավարությանը՝ «ամուր դիրքորոշում ցուցաբերել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների դեպքերի դեմ պայքարում»:⁵⁸
48. Ազգային ծագումը ներառված է արգելված չափանիշների ցանկում, ինչպես սահմանվում է ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածում, ՔՔԻՄԴ-ի և ՏՄՄԻՄԴ-ի Հոդված 2(1)-ում, ինչպես նաև ՌԻՄՎԿ-ի Հոդված 1(1)-ում: Ինչ վերաբերում է Եվրոպայի խորհրդի Քաղաքացիության մասին կոնվենցիայի Հոդված 2 (ա)-ին (որն

⁵¹ [ՌԱԵՀ Հայաստանի մասին զեկույց \(վշտադիտարկման հիմնգրորդ շրջափուլ\)](#), ընդունվել է 2016թ. հունիսի 28-ին, CRI(2016)37, կետ 10:

⁵² Ազգության մասին տե՛ս ՄԻԵԴ, [Գայգուսազն քնդդեմ Ավստրիայի](#) (Հայցադիմում թիվ 17371/90, վճիռը՝ 1996թ. սեպտեմբերի 16-ին), կետ 41, սեռական կողմնորոշման մասին՝ ՄԻԵԴ, [Գայգուսազն քնդդեմ Ավստրիայի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 43546/02, վճիռը՝ 2008թ. հունվարի 22-ին), կետ 91, գենդերային ինքնության մասին տե՛ս ՄԻԵԴ, [Իդենթիտետի և այլ քնդդեմ Վրաստանի](#) (Հայցադիմում թիվ 73235/12, վճիռը՝ 2015թ. մայիսի 12), կետ 96:

⁵³ Ազգության մասին տե՛ս նույն տեղում կետ 41 (ՄԻԵԴ, [Գայգուսազն քնդդեմ Ավստրիայի](#), 1996թ. սեպտեմբերի 16), սեռական կողմնորոշման մասին տե՛ս նույն տեղում կետ 91 (ՄԻԵԴ ՄՊ, [Գայգուսազն քնդդեմ Ավստրիայի](#), 2008թ. հունվարի 22-ին):

⁵⁴ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար, [Անձանց դեմ խտրականությունն ու բռնությունը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա](#) (2015թ. մայիսի 4), ՄԱԿ-ի փաստաթուղթ թիվ A/HRC/29/23, կետ 79(գ):

⁵⁵ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, [Քննարկում անձանց մարդու իրավունքների խթանումը և նրանց դեմ խտրականության վերացումը](#), Բանաձև 2191 (2017թ.):

⁵⁶ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար, [Մարդու իրավունքներ և գենդերային ինքնություն](#) (2009թ. հուլիսի 29) CommDH/IssuePaper (2009թ.), էջ 18:

⁵⁷ Այս հարցի շուրջ տե՛ս ավելի ընդհանրական կերպով Մ. Վան դեն Բրինկ և Պ. Դան, [Տրանս և ինտերսեքս անձանց հավասարության իրավունքները Եվրոպայում. համեմատական վերլուծություն](#), Գենդերային հավասարության և խտրականության բացառման հարցերով իրավաբանների եվրոպական ցանց, Եվրոպական հանձնաժողով, Գլխավոր Տնօրինություն, Արդարադատություն և սպառողներ, նոյեմբեր, 2018թ.:

⁵⁸ Եվրոպայի խորհուրդ, [Գործունեության 3-րդ եռամսյակային զեկույց 2018թ.](#), Դունյա Միլատովիչ, Մարդու իրավունքների հարցերի հանձնակատար (2018թ. հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ը):

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

ընդունվել է 1997թ.), ««ազգություն» նշանակում է իրավական կապ անձի և Պետության միջև և ցույց չի տալիս անձի էթնիկ ծագումը»: Բացի այդ, այս պաշտպանված հիմքի ներառումը կարծես արտացոլում է ՌԱԵՀ-ի կողմից ընդունված լայն մոտեցումը, որը սահմանում է «ռասայական խտրականությունը»՝ ազգության հիմքը ներառելով:

49. Թեև Օրենքի նախագծում բերված հիմքերի ցանկը չի հավակնում սպառիչ լինել («կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից իրական կամ ենթադրյալ» ձևակերպման շնորհիվ), մի քանի հատկանիշներ բացահայտ նշելով, օրենսդիրը ուղերձ է հղում, որ թվարկված հատկանիշների հիման վրա խտրականությունն անընդունելի է և որ խտրականության այս տեսակները կպատժվեն: Օրինակ, սեռական կողմնորոշման հիմքով խտրականության վերաբերյալ ԵՄ անդամ պետությունների փորձի հիման լայնորեն ճանաչվել է խտրականության այս ձևի նկատմամբ բացահայտ պատժամիջոցների կիրառման դրական ազդեցությունը:⁵⁹
50. Հաշվի առնելով միջազգային չափորոշիչները, լավագույն փորձը և համապատասխան նախադեպային իրավունքը՝⁶⁰ առաջարկվում է լրամշակել Օրենքի նախագիծը՝ թվարկելով արգելված վերաբերմունքի այլ հիմքեր, որոնք վերաբերում են ամենախոցելի խմբերին, հատկապես հղում անելով սեռական կողմնորոշմանը,⁶¹ գենդերային ինքնությանը,⁶² կրոնին և

⁵⁹ Տե՛ս [Ոստնագությունների մասին զեկույցը](#), որը վերաբերում է 33 եվրոպական երկրների Սեռի և սեռական ոստնագությունների մասին օրենքին Գենդերային հավասարության և խտրականության բացառման հարցերով իրավաբանների եվրոպական ցանցի անդամների հեղինակությամբ (2012թ.):

⁶⁰ Տե՛ս ՄԻԵԴ-ի գործերը՝ [Շալկը և Կոպին ընդդեմ Ավստրիայի](#), [Վայլինատոն ընդդեմ Հունաստանի](#) [ՄՊ]; [Թադուսին ընդդեմ Բուլղարիայի](#), [Պաժիկն ընդդեմ Խորվաթիայի](#), [Օրյանդին ընդդեմ Բուլղարիայի](#) և շատ այլք:

⁶¹ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողով, [Ընդհանուր մեկնաբանություն թիվ 20. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների նկատմամբ խտրականության բացառում](#) (Հոդված 2, կետ 2), ՄԱԿ-ի փաստաթուղթ E/C.12/ՄՊ/20, 2009թ., կետ 32: Նույնը վերաբերում է ՔԲԻՄԴ-ի 26-րդ հոդվածին, տե՛ս ՄԱԿ ՄԻԿ, [Յանգն ընդդեմ Ավստրիայի](#) (Հաղորդակցություն թիվ 941/2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/78/D/941/2000 (2003թ.): - ՄԻԵԴ-ը կայացրել է նմանատիպ որոշում, տե՛ս օրինակ՝ [Սմիթը և Գրադին ընդդեմ Միացյալ Թագավորության](#) (Հայցադիմում թիվ 33985/96 և թիվ 33986/96, վճիռը՝ 1999թ. սեպտեմբերի 27), [Կարներն ընդդեմ Ավստրիայի](#) (Հայցադիմում թիվ 40016/98, վճիռը՝ 2003թ. հուլիսի 24); [Բոչկովսկին և այլք ընդդեմ Լեհաստանի](#) (Հայցադիմում թիվ 1543/06, վճիռը՝ 2007թ. մայիսի 3), և [Բ.Բ.-ն ընդդեմ Ֆրանսիայի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 43546/02, վճիռը՝ 2008թ. հունվարի 22): Տե՛ս նաև ՄԻԵԴ-ի Արձանագրություն թիվ 12-ի [Եվրոպայի խորհրդի բացատրական զեկույցը](#), Հռոմ, թիվ 20, որը բացահայտ հղում է անում հավասարությանը և սեռական կողմնորոշմանը և ՄԻԵԴ-ի գործը՝ [Սելգեյրո զա Սիվա Մուտան ընդդեմ Պորտուգալիայի](#) (Հայցադիմում թիվ 33290/96, վճիռը՝ 1999թ. դեկտեմբերի 21):

⁶² Թեև ՄԻԵԴ-ի 14-րդ հոդվածը բացահայտ կերպով չի նշում «սեռական կողմնորոշումը» որպես պաշտպանված հիմք, ՄԻԵԴ-ը բացահայտորեն նշել է, որ այն ներառված է 14-րդ հոդվածով պաշտպանված «այլ» հիմքերում մի շարք գործերով, տե՛ս Տոդատակի հղում թիվ 2, էջ 77: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի [Ընդհանուր մեկնաբանություն թիվ 20. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների նկատմամբ խտրականության բացառում](#) (Հոդված 2, կետ 2), ՄԱԿ-ի փաստաթուղթ E/C.12/ՄՊ/20, 2009թ., կետ 32, տե՛ս նաև ՄԻԵԴ, [Գուրվինն ընդդեմ Միացյալ Թագավորության](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 28957/95, վճիռը՝ 2002թ. հուլիսի 11), Եվրոպական Միության Արդարադատության Դատարան, [Փ.-ն ընդդեմ Ս. -ի և Քորնուել շրջանի խորհրդի](#), Գործ C-13/94, (1996թ.): Տե՛ս նաև ՄԻԵԴ-ի գործը՝ [Վայլինատոնն ընդդեմ Հունաստանի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 29381/09 և 32684/09, վճիռը՝ 2013թ. նոյեմբերի 7), կետ 77: Սեռական կողմնորոշում հասկացությունն ընդգրկված է 14-րդ հոդվածում: Դատարանը բազմիցս նշել է, որ ինչպես սեռի հիման վրա տարբերակումները, սեռական կողմնորոշման վրա հիմնված տարբերակումները նույնպես պահանջում են «առանձնապես համոզիչ և ծանրակշիռ պատճառներ» հիմնավորման համար (տե՛ս օրինակ՝ [Կարներն ընդդեմ Ավստրիայի](#), կետ 37 և կետ 42; [X-ը և այլք ընդդեմ Ավստրիայի](#) [ՄՊ], կետեր 99, և այլն): Երբ վերաբերմունքի տարբերակումը հիմնված է սեռի կամ սեռական կողմնորոշման վրա, պետության հայեցողության սահմանը փոքր է (տե՛ս [Կարներն ընդդեմ Ավստրիայի](#), կետ 41, և [Կոզակն ընդդեմ Լեհաստանի](#)

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

հավատքին, ինչպես նաև բացահայտ կերպով նշել և արգելված հիմքերի ցանկում ավելացնել ազգային ծագումը և ազգությունը:

51. Ի լրումն, Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը նշում է. «[ու]ղղակի խտրականությունը առկա է նաև կնոջ նկատմամբ հղիության կամ մայրության պատճառով նվազ բարենպաստ վերաբերմունքի դեպքում»: Թեև ողջունելի է այն, որ կանանց ուղղակի խտրականությունը բացահայտ կերպով նշվում է օրենքում, գենդերային հիմքով խտրականությունը իսկապես շատ դեպքերում դրսևորվում է այնպիսի ձևերով, որոնք կապ չունեն հղիության կամ ծնող լինելու հետ: Այսպիսի համատեքստում 3-րդ հոդվածի առաջին կետի երրորդ ենթակետը ձևակերպելն ամրագրում է կանանց ավանդական, հայրիշխանական հասարակություններում գենդերային դերերը, որոնք սահմանափակվում են մոր դերով: Բացի այդ, պարզ չէ, թե արդյոք ներկա ձևակերպումը կտարածվեր այնպիսի դեպքերի վրա, որոնցում կանանց դեմ խտրականություն է կիրառվում հավանական ապագա մայրության հեռանկարի հիման վրա (զբաղվածության իմաստով և այլն): Այս իսկ պատճառով առաջարկվում է վերանայել 5-րդ հոդվածի առաջին կետի երրորդ ենթակետը և հանել տեքստից հղիությանը և մայրությանն արվող հղումը: Առնվազն հարկ է հստակեցնել, որ հղիությունը և մայրությունը ընդամենը օրինակներ կամ համատեքստեր են, որոնցում կանայք բախվում են անհավասար վերաբերմունքի կին լինելու պատճառով: Բացի այդ, առաջարկվում է, որ տեքստը բացահայտ կերպով նշի, որ կանանց նկատմամբ բռնությունը կանանց դեմ խտրականության ձև է, ինչպես հստակեցված է Ստամբուլյան կոնվենցիայի 3 (ա) հոդվածում:

5. *Քրեական, քաղաքացիական և վարչական պատասխանատվություն*

52. Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի երկրորդ կետը սահմանում է, որ խտրականություն կիրառող անձինք «ենթարկվում են կարգապահական, քաղաքացիական և/կամ քրեական պատասխանատվության»: Ենթադրելով, որ կարգապահական տույժերը կկարգավորվեն վարչական օրենսդրությամբ, այնուամենայնիվ, զարմանալի է, որ «վարչական պատասխանատվությունը», որն տարածվում է, սակայն չի սահմանափակվում կարգապահական կարգավորումներով, բաց է թողնվել Օրենքի նախագծից: **Առաջարկվում է հղում անել «վարչական պատասխանատվությանը» 3-րդ հոդվածի երկրորդ կետում:**
53. Ավելին, օրինականության և կանխատեսելիության պահանջը բավարարելու համար, օրենսդիրը պարտավորություն ունի՝ ճշգրիտ և բացահայտ կերպով

(Հայցադիմում թիվ 13102/02, վճիռը՝ 2010թ. մարտի 2, կետ 92): Տարբերակումները, որոնք հիմնված են միայն սեռական կողմնորոշման նկատառումների հիման վրա, ընդունելի չեն Կոնվենցիայի ներքո (տե՛ս [Սալգեյրո դա Սիլվա Մուտան ընդդեմ Պորտուգալիայի](#), կետ 36, [Է. Բ. -ն ընդդեմ Ֆրանսիայի](#) [ՄՊ], կետ 93 և 96, և [X-ը և այլք ընդդեմ Ավստրիայի](#) [ՄՊ], կետ 99):

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

ցույց տալու այն գործողությունները, որոնք կհանգեցնեն քրեական պատասխանատվության: Կարգապահական բնույթի պատժամիջոցների կիրառումը կպահանջի հստակ ձևակերպված իրավական դրույթների առկայություն, որոնք կսահմանեն չլիազորված, արգելված վարքը: Բացի այդ, պարզ չէ, թե ինչ տիպի պատասխանատվություն կսահմանվի Օրենքի նախագծի դրույթներով նախատեսված տարբեր տեսակի խտրական գործողությունների համար, պարզ չէ նաև, թե ինչպես են դրանք տարբերվում կամ առնչվում այնպիսի հանցագործությունների, որոնք արդեն իսկ պատժելի են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, ինչպես օրինակ՝ կոդմնակալության հիմքով հանցագործությունները, ասելության հրահրումը կամ էթնիկ/ռասայական հիմքով բռնությունը: Այդ իսկ պատճառով, պարզ չէ, թե որ դեպքում խտրական գործողությունները, ըստ սույն Օրենքի նախագծի սահմանման, կբավարարեն քրեական օրենսդրության պահանջները և առաջ կբերեն քրեական պատասխանատվություն:⁶³

54. Այս իսկ պատճառով առաջարկվում է, որ Օրենքի նախագծի կոնկրետ Հոդվածներում հղում արվի այլ իրավական նորմերի, որոնք պարունակում են արգելված գործողությունների հստակ նկարագրություն, ինչպես նաև ներառվի ուղղորդում պատասխանատվության կիրառվելիք տեսակի վերաբերյալ:

6. Անուղղակի խտրականության սահմանումը

55. Ըստ Օրենքի նախագծի անուղղակի խտրականությունը տեղ է գտնում այն ժամանակ, երբ «[ա]ռերևույթ չեզոք քաղաքականություն, վերաբերմունք, պայմաններ, չափորոշիչներ կամ աշխատակարգեր, որը պաշտպանված հատկանիշներից որևէ մեկի կամ մի քանիսի կամ դրանց ասոցացման հիմքով, զգալիորեն անբարենպաստ է ազդում անձի վրա նմանատիպ իրավիճակներում հայտնված այլ անձանց հետ համեմատ կամ անհամաչափորեն անբարենպաստ է ազդում անձանց որոշակի խմբի վրա, կամ հավասար վերաբերմունք անձանց նկատմամբ, ովքեր գտնվում են բնույթով տարբեր պայմաններում՝ բացառությամբ, երբ այսպիսի

⁶³ Տե՛ս ՄԻԵԴ, [Կոպրիվնիկարն քնդդեմ Այովենիայի](#) (Հայցադիմում թիվ 67503/13, վճիռը՝ 2017թ. հունվարի 24), կետ 46, որտեղ Դատարանը նշեց, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածը [...] նաև մարմնավորում է, ավելի ընդհանրական կերպով, այն սկզբունքը, որ միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նշանակել պատիժը: Թեև այն մասնավորապես արգելում է գոյություն ունեցող հանցանքների շրջանակի տարածումն այնպիսի գործողությունների վրա, որոնք նախկինում քրեորեն պատժելի հանցագործություններ չէին, այն նաև սահմանում է մի սկզբունք, ըստ որի քրեական իրավունքը չպետք է լայնորեն մեկնաբանվի ի վնաս մեղադրվողի, օրինակ՝ ըստ համանմանության»: Այն նաև նշել է, որ «[...] հանցանքները և համապատասխան պատիժները պետք է հստակ սահմանվեն օրենքով: Այս պահանջը բավարարվում է այն դեպքում, երբ անձը կարող է համապատասխան դրույթի ձևակերպումից հասկանալ, ըստ անհրաժեշտության դատարանների կողմից մեկնաբանության աջակցությամբ և համապատասխան իրավաբանական խորհրատվությունն ստանալուց հետո, թե որ գործողություններն ու բացթողումները նրան կենթարկեն քրեական պատասխանատվության և ինչ պատիժ կսահմանվի նրա համար այս առումով» (կետ 47): Տե՛ս նաև ՄԻԵԴ, [Գաֆկարիան քնդդեմ Կիպրոսի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 21906/04, 2008թ. փետրվարի 23), կետ 140:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

քաղաքականությունների, վերաբերմունքի, պայմանների, չափորոշիչների և աշխատակարգերի կիրառումը հետապնդում է իրավաչափ նպատակ, անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության համար, իսկ կիրառված միջոցները համաչափ են»:

56. ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականում առաջարկվող սահմանումը հղում է անում «այնպիսի դրույթի, չափանիշի կամ աշխատակարգի, [որին] համապատասխանությունը հեշտ չէ ապահովել կամ որը նվազ բարենպաստ պայմաններ է ստեղծում [արգելված հիմքերից որևէ մեկով (. . .)] առանձնացող խմբին պատկանող անձանց համար» (կետ 1, գ), (ընդգծումը մերն է): ԵՄ դիրեկտիվներով սահմանվող անուղղակի խտրականությունը տեղի է ունենում այն դեպքերում, «երբ ակնհայտորեն չեզոք դրույթը, չափանիշը կամ աշխատակարգը [կոնկրետ հատկանիշներ ունեցող] անձանց կարող է դնել առանձնակի նվազ բարենպաստ իրավիճակում այլ անձանց համեմատ (. . .)»:⁶⁴
57. Հարկ է նաև նկատել, որ 5-րդ հոդվածի 1-ին կետը նաև հղում է անում այնպիսի իրավիճակների, որտեղ վիճարկվող միջոցառումը «անհամաչափորեն բացասաբար է ազդում անձանց որոշակի խմբի վրա», ինչը թվում է, պատշաճ ձևակերպում է: Անձին վիճարկվող միջոցառման արդյունքում նվազ բարենպաստ իրավիճակում (կամ, եթե գործածելու լինենք ԵՄ դիրեկտիվների ձևակերպումները, կարող են դնել առանձնակի նվազ բարենպաստ իրավիճակում) դնելու կամ դրա հավանականության փաստը պետք է բավարար լինի՝ հաստատելու առերևույթ (prima facie) խտրականությունը: Պահանջն առ այն, որ տուժողի իրավիճակը լինի «զգալիորեն անբարենպաստ», անհարկի սահմանափակող է թվում և բացի այդ, տարբերվում է խտրականության ընդհանուր սահմանումից, որը ներառված է Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի առաջին կետում:
58. Այսպիսով, առաջարկվում է հանել «զգալիորեն» բառը անուղղակի խտրականության սահմանումից և Օրենքի նախագծի ողջ տեքստում ապահովել անուղղակի խտրականության սահմանման միասնական տերմինաբանություն:

7. Վիկտիմիզացիա սահմանումը

59. Վիկտիմիզացիայի սահմանումը, ինչպես այն ներկայացված է Օրենքի նախագծի 5-րդ հոդված առաջին կետի ութերորդ ենթակետում, չափազանց սահմանափակող է թվում: Այն հղում է անում «[դ]իտավորյալ գործողություն կամ անգործություն, որը սույն օրենքի շրջանակում իր իրավունքների պաշտպանության նպատակով իրավասու մարմիններին դիմում կամ բողոք ներկայացրած անձի համար հանգեցրել է բացասական հետևանքների»:

⁶⁴ Տե՛ս օրինակ [Դիրեկտիվ 2000/43-ի](#) Հոդված 2(բ)-ը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

Վիկտիմիզացիայի հասկացությունը ենթադրում է պաշտպանություն ցանկացած հաշվեհարդարից, որը կարող է ձեռնարկել խտրականության մեջ մեղադրվող (անհատ կամ հանրային) անձը կամ մարմինը՝ բողոքին ի պատասխան: Օրենքի նախագծում ներառված սահմանումը միայն պաշտպանում է այն անձանց, որոնք դիմում կամ բողոք են ներկայացրել իրավասու մարմիններին: Սույն սահմանումն ունի երկու խնդիր.

- Անձը կարող է բախվել հաշվեհարդարի գործողությունների որ պետական մարմնի՝ օրինակ, ՀԿ-ի կամ ձեռնարկության ներսում բողոքների ներքին մեխանիզմով ենթադրյալ խտրականության մասին հաղորդելուց հետո: Ներկայիս սահմանման մեջ օգտագործված «իրավասու մարմիններ» բառերը չափազանց խիստ սահմանափակում են. դրանք ենթադրում են, որ պաշտպանված են միայն այն անձինք, ովքեր բողոք են ներկայացրել պետական հաստատությանը:
- Հաշվեհարդարը կարող է թիրախավորել այլ անձանց, ոչ թե նրան, ով բողոք է ներկայացրել, օրինակ՝ այն անձանց, որոնց օգնել են ենթադրյալ տուժածին իրենց հայցադիմումը լրացնել՝ տրամադրելով աջակցություն կամ ապացույցներ (օրինակ՝ վկայություն են տվել), որ տեղի է ունեցել խտրականություն:

60. ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականը նշում է, որ «Օրենքը պետք է ապահովի պաշտպանություն որևէ հաշվեհարդարից ռասայական հանցագործություններից կամ ռասայական խտրականությունից իրենց պնդմամբ տուժածների, այդպիսի գործողությունների մասին հաղորդողների կամ դրանց վերաբերյալ ապացույցներ տրամադրող անձանց համար»:⁶⁵ Նույն ոգով, հավասարության և խտրականության բացառման մասին ԵՄ դիրեկտիվները պահանջում են, որ անդամ պետություններն իրենց ազգային իրավական համակարգեր ներմուծեն «այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են՝ պաշտպանելու անձանց որևէ բացասական վերաբերմունքից կամ հավասար վերաբերմունքի սկզբունքի պահպանման նպատակ հետապնդող բողոքի կամ վարույթի նկատմամբ արձագանք հանդիսացող բացասական հետևանքից»:⁶⁶ Ավելին, Ռասայական հավասարության դիրեկտիվի 9-րդ հոդվածի և Զբաղվածության ոլորտում հավասարության դիրեկտիվի 11-րդ հոդվածի համաձայն, «Անդամ պետությունները իրենց ազգային իրավական համակարգեր են ներմուծում այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են՝ պաշտպանելու անձանց որևէ բացասական վերաբերմունքից կամ հավասար վերաբերմունքի սկզբունքի պահպանման նպատակ հետապնդող բողոքի կամ վարույթի նկատմամբ արձագանք հանդիսացող բացասական հետևանքից»: Դիրեկտիվներով պաշտպանությունը տարածվում է ցանկացած անձի վրա,

⁶⁵ Տե՛ս կետ 27, [ՌԱԵՀ-ի Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարական](#), որն ընդունվել է 2002թ. (2017թ. լրամշակմամբ) (այսուհետ՝ «ՌԱԵՀ հանձնարարական թիվ 7»):
⁶⁶ Տե՛ս օրինակ՝ [Դիրեկտիվ 2000/43-ի](#) 9-րդ հոդվածը, ընդգծումը մերն է:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

ով կարող է արժանանալ «բողոքի կամ վարույթի նկատմամբ արձագանք» հանդիսացող բացասական վերաբերմունքի:

61. Ուստի սույնով առաջարկվում է լրամշակել վիկտիմիզացիայի սահմանումը՝ պաշտպանությունը տարածելով բոլոր այն անձանց վրա, ովքեր ենթակա են բացասական վերաբերմունքից կամ բացասական հետևանքներից տուժելու խտրականության վերաբերյալ (որևէ համապատասխան կազմակերպության) ներկայացված բողոքի կամ վարույթի պատճառով:

8. Խելամիտ հարմարեցումների սահմանումը

62. Հայաստանը ՀԱԻԿ-ի անդամ է, իսկ դրա 2-րդ հոդվածն աներկբայորեն նկարագրում է «խելամիտ հարմարեցման չտրամադրումը» որպես հաշմանդամության վրա հիմնված և արգելքի ենթակա խտրականության ձև:⁶⁷ Ավելին, ՀԱԻԿ-ի 5-րդ հոդվածի երրորդ կետը սահմանում է, որ «հավասարության հաստատմանն աջակցելու և խտրականությունը վերացնելու նպատակով մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր քայլերը՝ ապահովելու խելամիտ հարմարեցումները»: Այնուամենայնիվ, Օրենքի նախագծի 4-րդ հոդվածում թվարկված արգելված խտրականության հիմքերում և տեսակներում «հաշմանդամություն ունեցող անձանց խելամիտ հարմարեցումներ չտրամադրելը» նշված չէ:
63. Թեև «խելամիտ հարմարեցումները» նշված չեն Օրենքի նախագծի 4-րդ հոդվածում, այս դրույթը չի ենթադրում որևէ պարտավորություն, այլ, կարծես, թույլատրում է «խելամիտ հարմարեցումները» «ժամանակավոր հատուկ միջոցների» համատեքստում, որոնք «հավասար վերաբերմունքի, հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման միջոց են»՝ ազգային օրենսդրությանը համապատասխան: Օրենքի նախագիծը կարծես գործածում է միջազգային գործիքներում կիրառված սահմանումից տարբերվող սահմանում: Միջոցները պետք է նպատակ ունենան կանխել կամ փոխհատուցել այն անբերանապատ պայմանները, որոնք կապված են արգելված հիմքի հետ և պետք է ժամանակավոր լինեն (ԵՄ Դիրեկտիվի 5-րդ հոդված, ՄԻԵԿ Արձանագրություն թիվ 12-ի նախաբան, ՌԽՎՄԿ-ի Հոդված 1(4)):
64. Բացի այդ, 4-րդ հոդվածի 3-րդ կետը չի համապատասխանում ՌԽՎԿ-ին, որը, ինչպես նշված է վերը (կետ 52), պահանջում է խելամիտ հարմարեցումների չտրամադրման՝ որպես խտրականության ձևի արգելք և պահանջում է քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որ խելամիտ հարմարեցում

⁶⁷ Ըստ 2-րդ հոդվածի, «հաշմանդամության հիման վրա [խ]տրականությունը նշանակում է հաշմանդամության հիման վրա ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որն ունի քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ որևէ այլ բնագավառում մյուսների հետ հավասար հիմունքներով մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը, իրականացումը և օգտագործումը չեղյալ համարելու կամ նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում է այդպիսի հետևանքների: Այստեղ ներառված են խտրականության բոլոր ձևերը, այդ թվում՝ խելամիտ հարմարեցման չապահովումը»:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

տրամադրվի ըստ անհրաժեշտության: «Խելամիտ հարմարեցում» նշանակում է անհարկի ջանքեր չպահանջող անհրաժեշտ և համապատասխան փոփոխություն և շտկումներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվելն ու դրանց իրականացումը (ՀԱԻԿ, 2-րդ հոդված): ԵՄ 2000/78 դիրեկտիվի 5-րդ հոդվածը, որն անդրադանում է միայն զբաղվածության ոլորտին, նույնպես կարող է վերաբերելի լինել:⁶⁸

65. Այսպիսով, ՀԱԻԿ-ի ներքո պետության պարտավորություններն իրականացնելու նպատակով հարկ է, որ օրենսդիրը ներառի «հաշմանդամություն ունեցող անձին խելամիտ հարմարեցում չտրամադրելը» 4-րդ հոդվածի երրորդ կետում խտրականության թվարկված տեսակներում:

9. Խտրականությունից իրավական և դատական պաշտպանությունը - Հոդված 7

66. 7-րդ հոդվածով սահմանված խտրականությունից իրավական և դատական պաշտպանությունը հարկ է ուժեղացնել մի քանի առումներով: Ստորև քննարկված է չորս կետ. յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմել դատարան (ա), հաշտեցման ընթացակարգերի առկայություն (բ), վիկտիմիզացիայից պաշտպանություն (այսինքն՝ հաշվեհարդար) (գ), և օրենքի խախտման դեպքում կիրառելի պատժամիջոցներ (դ):

ա. Իրավաբանական աջակցություն, հաշտեցման ընթացակարգեր

67. 7-րդ հոդվածի առաջին կետը իրավունք է տալիս անձին, որը հիմքեր ունի կարծելու, որ իր նկատմամբ կիրառվել է խտրականություն, դիմել դատարան կամ այլ իրավասու մարմինների: Բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ գործնականում խտրականությունից տուժողների մեծ մասը որևէ բողոք չի ներկայացնում: Իրավական պաշտպանության միջոցների մասին գիտելիքի պակասը, վարույթի հետ կապված ծախսերը, հաճախ խտրականություն կիրառողների համեմատ տուժողների ավելի թույլ դիրքերը այս երևույթը բացատրող հիմնական պատճառներից են: Համապատասխանաբար, կարևոր է հզորացնել հաստատությունները, հատկապես՝ Իրավահավասարության հարցերով զբաղվող համապատասխան մարմինները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունները, որպեսզի վերջիններս կարողանան սատարել անձին խտրականության դեպքում վարույթ հարուցելու կամ բողոք ներկայացնելու գործողություններում:

⁶⁸ [ԵՄ Դիրեկտիվ 2000/78-ը](#) սահմանում է պարտավորություն (հանրային և մասնավոր) հատվածի աշխատողների համար՝ «իրականացնել համապատասխան միջոցառումներ, կոնկրետ դեպքում ըստ անհրաժեշտության, հնարավորություն տալու հաշմանդամություն ունեցող անձին հասանելիություն ունենալ, մասնակցել և առաջխաղացում ունենալ աշխատանքում, կամ անցնել վերապատրաստում, եթե այսպիսի միջոցառումները գործատուին չեն պարտադրում անհամաչափ բեռ ստանձնել (...)» (Հոդված 5):

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

68. Հավասարության և խտրականության բացառման մասին ԵՄ դիրեկտիվները պարունակում են մի դրույթ, որը պետություններից պահանջում է ապահովել, որ խտրականության դեմ պայքարում օրինական շահ ունեցող ասոցիացիաները, կազմակերպությունները կամ այլ իրավաբանական անձինք կարողանան ներգրավվել, բողոքողի անունից կամ ի նպաստ վերջինիս, խտրականության դեմ նորմերի կիրարկման նպատակով սահմանված դատական և/կամ վարչական ընթացակարգերով:⁶⁹ Նույն կերպ, ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականում նշված է, որ «այնպիսի կազմակերպությունները, ինչպիսիք են ազգային օրենսդրությամբ սահմանված չափանիշների համաձայն ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարում օրինական շահ ունեցող ասոցիացիաները, արհմիությունները և այլ իրավաբանական անձինք» պետք է «իրավունք ունենան հարուցել քաղաքացիական գործեր, միջամտել վարչական վարույթներին կամ քրեական գործի համար հիմք հանդիսացող բողոք ներկայացնել, անգամ եթե կոնկրետ տուժող չի նշվում»: Ապա հավելվում է, որ «կոնկրետ տուժող նշելու դեպքում անհրաժեշտ է ստանալ այդ տուժողի համաձայնությունը»:
69. Ավելին, ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականը սահմանում է, որ Հավասարության մարմինը պետք է ունենա լիազորություններ հաստատությունների, դատական մարմինների և դատարանների առջև ներկայացնելու խտրականության ենթարկված անձանց, վերջիններիս համաձայնությամբ, ինչպես նաև իր իսկ անունից առանձին դեպքերի և համակարգային խտրականության հետ կապված գործեր հարուցել (կետ 14, գ) և դ)): Մեծ թվով ԵՄ երկրներ իրենց Հավասարության մարմինն տվել են դատարան դիմելու իրավասություն:⁷⁰
70. Ըստ ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականի խտրականությունից տուժածներին պետք է տրվի հնարավորություն օգտվել հեշտ հասանելի հաշտեցման ընթացակարգերից:⁷¹ ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 2 հանձնարարականը մասնավորապես առաջարկում է իրավագործել հավասարության մարմինն՝ ըստ անհրաժեշտության խթանել հաշտեցման ընթացակարգերը (կետ 14): Բացի դրանից, ԵՄ դիրեկտիվները նաև խրախուսում են անդամ պետություններին խտրականության դեպքերի համար հաշտեցման ընթացակարգեր սահմանել:⁷² Այսպիսի ընթացակարգերը կարող են օգտակար լինել

⁶⁹ Տե՛ս օրինակ՝ [Ղիրեկտիվ 2000/43-ի](#) Հոդված 7(2)-ը: Տե՛ս նաև սրա վերաբերյալ Եվրոպական միության Արդարադատության դատարանի C-54/07 ճշգրտումները, 2008թ. հուլիսի 10-ին, [Centrum voor gelijkheid van kansen en voor racismebestrijding v. Firma Feryn](#).

⁷⁰ Տե՛ս Գենդերային հավասարության և խտրականության բացառման հարցերով իրավաբանների Եվրոպական ցանց, [Եվրոպայում խտրականության բացառման օրենսդրության համեմատական վերլուծություն](#), Եվրոպական հանձնաժողով, Գլխավոր Տնօրինություն, Արդարադատություն և սպառողներ, 2017թ.:

⁷¹ [ՌԱԵՀ-ի Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարական](#), կետ 10:

⁷² Տե՛ս, օրինակ, [Ղիրեկտիվ 2000/43-ի](#) Հոդված 7(1)-ը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

խտրականության դեպքերում, դրանք ավելի արագ են, նվազ բեռնված և բևեռացնող են, քան դատական վարույթները:

71. Առաջարկվում է, որ Հավասարության մարմինը, ինչպես նաև դրանում օրինական շահ ունեցող հասարակական կազմակերպությունները իրավասու լինեն դատարան դիմել խտրականությունից տուժածի անունից կամ ի պաշտպանություն նրա: Օրենքի նախագիծը պետք է նաև պարունակի դրույթ, որի նպատակը կլինի հաշտեցման ընթացակարգերի հասանելիությունն ապահովել այն անձանց համար, ովքեր համարում են, որ խտրականության զոհ են դարձել: Բացի այդ, առաջարկվում է այս լիազորությունները վերագրել Մարդու իրավունքների պաշտպանին կամ հատուկ ստեղծված հավասարության անկախ մարմնին:

բ. Պաշտպանություն վիկտիմիզացիայից

72. Օրենքի նախագծի Հոդված 7(2)-ը նպատակ ունի հաշվեհարդարից պաշտպանել այն անձանց, ովքեր համապատասխան մարմիններին հաղորդել են խտրականության դեպքերի մասին: Վիկտիմիզացիայի սահմանման և վերը նշված ուղղություններով ընդլայնելու անհրաժեշտության մասին արդեն արված դիտարկումները (տես կետեր 59-61) այստեղ նույնպես վերաբերելի են: Բացի այդ, Օրենքի նախագծի Հոդված 7(2)-ը հստակ չի նշում, թե իրավական պաշտպանության ինչ միջոցներ են առկա այն անձանց համար, ովքեր այսպիսի հաշվեհարդարի զոհեր են: Առաջարկվում է շտկել այս թերությունը:

գ. Պատժամիջոցներ

73. Թեև Օրենքի նախագծի 7-րդ հոդվածը ճանաչում է խտրականությունից իրավական և դատական պաշտպանության իրավունքը, այն չի հստակեցնում օրենքի խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցները: 7-րդ հոդվածի առաջին կետը միայն նշում է, որ նրանք, ովքեր կարծում են, թե տուժել են խտրականությունից, պետք է իրավունք ունենան «նյութական և ոչ նյութական վնասի փոխհատուցում ստանալ»:
74. ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականում նշվում է, որ օրենքը «պետք է սահմանի արդյունավետ, համաչափ և զսպող պատժամիջոցներ խտրականության դեպքերի համար» և որ այսպիսի պատժամիջոցները «պետք է ներառեն տուժողին հասցված թե՛ նյութական, թե՛ ոչ նյութական վնասի փոխհատուցման վճարում»:⁷³ Նմանապես, ԵՄ դիրեկտիվներն անդամ պետություններից պահանջում են ապահովել խտրականության դեմ պայքարի դրույթների խախտումների դեպքում կիրառվող պատժամիջոցների բնույթով «արդյունավետ, համաչափ և զսպող» լինելը:⁷⁴

⁷³ [ՌԱԵՀ-ի Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարական](#), կետ 12:
⁷⁴ Տե՛ս [Գիրեկտիվ 2000/43-ի](#) Հոդված 15-ը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

75. Առաջարկվում է էլ ավելի մասնավորեցնել Օրենքի նախագծում (կամ հղում անել օրենդրության այն համապատասխան դրույթներին, որոնք սահմանում են) խտրականության բացահայտված դեպքերում կիրառելի պատժամիջոցների բնույթն ու մակարդակը և ապահովել այս պատժամիջոցների «արդյունավետ, համաչափ և գսպող» լինելը:

10. Հավասարության մարմին. Մարդու իրավունքների պաշտպան և Իրավահավասարության խորհուրդ

76. Ինչպես պարզ է դառնում Օրենքի նախագծից, Մարդու իրավունքների պաշտպանն է իրականացնելու Հավասարության մարմնի գործառույթները՝ «իրավահավասարության և խտրականության բոլոր դրսևորումներից պաշտպանության ապահովման հարցում» Իրավահավասարության խորհրդի աջակցությամբ: Իրավահավասարության խորհուրդը նաև աջակցում է Մարդու իրավունքների պաշտպանին բողոքների քննության հարցում: Այնուամենայնիվ, Օրենքի նախագիծն այլ մանրամասներ չի տրամադրում Օրենքի նախագծի կիրարկումն ապահովելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի մանդատի կամ մեխանիզմի մասին:

77. Թեև պետությունն ունի հայեցողության սահման՝ որոշելու, թե սահմանվող վերահսկողության մեխանիզմներն ինչպիսին պիտի լինեն, մի շարք խնդիրներ մտահոգություն են առաջացնում և չեն համապատասխանում միջազգային պարտավորություններին և լավ փորձին:⁷⁵

78. 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթում ԵԱՀԿ մասնակից պետությունները հանձն են առել «նպաստել մարդու իրավունքների և օրենքի գերակայության ուղրտում անկախ ազգային հաստատությունների հիմնմանը և ուժեղացմանը»:⁷⁶ Բացի այդ, Փարիզյան սկզբունքները սահմանում են մարդու իրավունքներով զբաղվող հաստատությունների դերը և ազգային մակարդակում մարդու իրավունքների հաստատությունների հիմնադրման և գործունեության նվազագույն չափորոշիչները՝ կապված բազմակարծության, թափանցիկության, գործառութային և ինտիտուցիոնալ անկախության և արդյունավետության երաշխիքների հետ:⁷⁷

⁷⁵ ՄԻԵԴ-ի կողմից մշակված հայեցողության սահմանի դոկտրինը: Օրինակ՝ տե՛ս հետևյալ գործերը. [Պակասան քնդդեմ Լիտվայի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 34932/04, վճիռը՝ 2011թ. հունվարի 6), կապված ընտրելու և ընտրվելու իրավունքի հետ, կետ 96, [Վայլիանաուտուն քնդդեմ Հունաստանի](#) [ՄՊ] (Հայցադիմում թիվ 29381/09 և թիվ 32684/09, վճիռը՝ 2013թ. նոյեմբերի 7), կապված նույնի սեռի և տարբեր սեռերի զույգերի համաձայնության հիման վրա զուգընկերության խտրական կարգավորումը, կետ 76:

⁷⁶ Տե՛ս 1990թ. ԵԱՀԿ-ի կոպենհագենյան փաստաթղթի 27-րդ պարբերությունը:

⁷⁷ Փարիզյան սկզբունքներն ուրվագծում են նվազագույն չափորոշիչներն այս առումով, ներառյալ՝ մարդու իրավունքների ընդգրկումն մանդատը, կառավարությունից ինքնավարությունը, գործառութային և ինտիտուցիոնալ անկախության երաշխիքները, բազմակարծությունը, հետաքննության համապատասխան ռեսուրսները և համապատասխան լիազորությունները, ըստ կիրառելիության: Տե՛ս նաև ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակի [Ազգային մակարդակում մարդու իրավունքների ուղրտում համագործակցության գործիքակազմը](#) (2012թ.):

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

79. Բազմաթիվ մասնակից պետությունների փորձը ցույց է տալիս խտրականության դեմ պայքարով և հավասար վերաբերմունքի խթանմամբ զբաղվող, սովորաբար «հավասարության մարմին» կոչվող պետական անկախ գործակալության հիմնման կարևորությունը: ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 2 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից պահանջում է հիմնել հավասարության մեկ կամ ավելի անկախ մարմիններ՝ պայքարելու ռասիզմի և անհանդուրժողականության դեմ:⁷⁸ Ապա այն նկատում է, որ եթե հավասարության մարմինը գտնվում է մարդու իրավունքների իրացմամբ զբաղվող բազմամանդատ հաստատության կամ մարդու իրավունքների պաշտպանի մանդատի կազմում, հարկ է ապահովել հետևյալ պայմանների բավարարումը.

«ա. Օրենսդրությունը պետք է աներկբայորեն սահմանի այդ հաստատության հավասարության հարցերի մանդատը:

բ. Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսներ պետք է հատկացվեն յուրաքանչյուր մանդատի մասով՝ ապահովելու հավասարության մանդատի վրա պատշաճ կենտրոնացումը:

գ. Ղեկավար, խորհրդատվական և կառավարման կառույցները պետք է կազմակերպվեն այնպես, որ հնարավոր լինի հստակ առաջնորդությունը, հավասարության մանդատի հանրահռչակումը և տեսանելիության խթանումը,

դ. Հաշվետվողականության իրականացման ձևերը պետք է համապատասխան ուշադրություն դարձնեն հավասարության մանդատի ներքո ի հայտ եկող մտահոգություններին և կատարվող աշխատանքին» (կետ 7):

80. ԵՄ 2000/43 և 2006/54 դիրեկտիվները ԵՄ անդամ պետություններից պահանջում են հիմնել մարմին կամ մարմիններ, որոնց կզբաղվեն համապատասխանաբար ռասայի կամ էթնիկ ծագման և սեռի հիմքերով բոլորի նկատմամբ առանց խտրականության հավասար վերաբերմունքի խթանմամբ, վերլուծությամբ, մշտադիտարկմամբ և աջակցությամբ:⁷⁹

81. Օրենքի նախագծից ակնհայտ է դառնում, որ Իրավահավասարության խորհուրդը չի նախատեսվում որպես հավասարության անկախ մարմին կամ նույնիսկ ինքնավար մարմին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կազմում: Ավելի շուտ այն հիմնվում է որպես խորհրդակցական

⁷⁸ [ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 2 հանձնարարականը ազգային մակարդակում ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարող Հավասարության մարմինների մասին](#) (ընդունվել է 1997թ., 2017թ. լրամշակմամբ): Բացի այդ, [ԵՄ Դիրեկտիվ 2000/43-ը](#) և [2006/54-ը](#) ԵՄ անդամ պետություններից պահանջում են նշանակել առանձին մարմին կամ մարմիններ՝ բոլոր անձանց համար, համապատասխանաբար, ռասայի կամ էթնիկ ծագման և սեռի հիմքերով առանց խտրականության հավասար վերաբերմունքը խթանելու, վերլուծելու, մշտադիտարկելու և դրան աջակցելու համար: [Եվրոպական Հանձնաժողովի 2018թ. հունիսի 22-ի հանձնարարականը հավասարության մարմինների համար չափորոշիչների մասին](#) տրամադրում է լրացուցիչ ուղղորդում:

⁷⁹ [ԵՄ Դիրեկտիվ 2000/43-ի](#) Հոդված 13, [ԵՄ Դիրեկտիվ 2006/54-ի](#) Հոդված 20:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

մարմին, որն աջակցում է Մարդու իրավունքների պաշտպանին և այս կերպ չի կարող անջատվել նրանից: Այս իսկ պատճառով, գերկարևոր է, որ Հավասարության մարմնի մանդատը հստակ սահմանված լինի Օրենքի նախագծով և թե՛ օրենքով, թե՛ գործնականում ապահովի Հավասարության մարմնի անկախությունը և արդյունավետությունը:

82. Առաջարկվում է սահմանել Մարդու իրավունքների պաշտպանի մանդատը, լիազորությունները և իրավասությունները խտրականության բացառման ոլորտում, հստակ սահմանել այդ հաստատության կազմում մանդատը և գործառույթները: Օրենքի նախագիծը պետք է պարունակի մանրակրկիտ դրույթներ կամ հղումներ Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքում նրա՝ խտրականության դեմ պայքարի և իրավահավասարության խթանման մանդատը, իրավասությունները և լիազորությունները սահմանող կամ նկարագրող դրույթներին:
83. Օրենքի նախագծում ոչինչ չի երաշխավորում, որ Մարդու իրավունքների պաշտպանը կունանա համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսներ՝ արդյունավետ կերպով իրականացնելու խտրականության բացառմանը և իրավահավասարությանն առնչվող իր մանդատը: ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 2 հանձնարարականը սահմանում է, որ «համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսները պետք է հատկացվեն յուրաքանչյուր մանդատի համար՝ ապահովելու իրավահավասարության մանդատի վրա համապատասխան կենտրոնացումը»:⁸⁰ Մարդու իրավունքների պաշտպանը պետք է հատկացնի կոնկրետ թվով մշտական աշխատողներ, որոնք հատուկ կգրառվեն կոնկրետ խտրականությամբ և իրավահավասարության հարցերով:
84. 12-րդ հոդվածի երկրորդ կետը սահմանում է, որ Իրավահավասարության խորհուրդը «ստեղծվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և սույն օրենքով սահմանված կարգով և գործում է այդ օրենքների [...] հիման վրա»: Օրենքի նախագծից պարզ չի դառնում, թե արդյոք պահանջվում են սահմանադրական օրենքի փոփոխություններ՝ Խորհրդի հիմնադրման իրավական հիմքերն ապահովելու համար, կամ արդյոք դրանք պարզապես կրկնում են այս Օրենքի նախագծի դրույթները կամ նույնիսկ պլանավորում են ընդլայնել Խորհրդի գործառույթները:
85. Սահմանադրական օրենքի փոփոխության բարդությունը գիտակցելով՝⁸¹ հասկանալի է թվում Հավասարության մարմնի համար սովորական օրենքով որոշ գործառույթների և ընթացակարգերի կարգավորման ցանկությունը:

⁸⁰ [ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 2 հանձնարարականը ազգային մակարդակում ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարող Հավասարության մարմինների մասին](#) (վերանայված):

⁸¹ Որը պահանջում է պատգամավորների ընդհանուր թվի քվեների առնվազն երեք հինգերորդը, տե՛ս Հայաստանի Հանրապետության [Սահմանադրության](#) 103-րդ հոդվածը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

Այնուամենայնիվ, եթե առանց սահմանադրական օրենքի փոփոխությունների ոչ Մարդու իրավունքների պաշտպանը, ոչ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Իրավահավասարության խորհուրդը չեն կարողանա գործել որպես Հավասարության մարմին, նրա մանդատի պատշաճ գնահատումը հնարավոր է թվում միայն սահմանադրական օրենքի (փոփոխությունների) հետ միասին և լույսի ներքո:

86. Այլապես, եթե իշխանություններն ընտրեն հիմնել Հավասարության մարմին գոյություն ունեցող հաստատության կազմում, առաջարկվում է համապատասխանաբար սահմանել այս մարմնի մանդատը՝ ապահովելով դրա անկախությունը և գործառույթների արդյունավետ իրականացումը թե օրենքով, թե գործանականում՝ տեղ գտած խտրականության դեպքում իրավական պաշտպանության միջոց ապահովելով: Իշխանությունները կարող են նաև դիտարկել Օրենքի այս նախագծով գոյություն ունեցող հաստատություններից ամբողջապես առանձին Հավասարության մարմնի ստեղծման հնարավորությունը, այն ենթադրությամբ, որ այն կարող է հիմնվել սովորական օրենքով, առանց Սահմանադրության կամ սահմանադրական օրենքի փոփոխության:
87. 12-րդ հոդվածի առաջին կետը սահմանում է, որ Իրավահավասարության խորհուրդը գործում է «իրավահավասարության, անաչառության, հրապարակայնության, թափանցիկության, մատչելիության և ներկայացուցչականության սկզբունքների հիման վրա»: Թեև ընդհանուր առմամբ այս սկզբունքների բացահայտ հիշատակումը ողջունելի է, Օրենքի նախագիծը չի սահմանում, թե ինչ է նշանակում «անաչառություն» և չի մանրամասնում օրենքում առկա երաշխիքները, որոնք կկիրառվեն՝ պաշտպանելու և երաշխավորելու այսպիսի անկախությունը, քանի որ ոչ մանդատը, ոչ Խորհրդի անդամների ընտրության/նշանակման ընթացակարգը չի երաշխավորում դրա անկախությունը:
88. 13-րդ հոդվածը սահմանում է Խորհրդի անդամների ընտրության պահանջները: Թեկնածուները կարող են առաջադրվել հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրման կամ ինքնաառաջադրման միջոցով: Թեկնածուն պետք է լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ունենա մարդու իրավունքների ոլորտում աշխատանքի առնվազն երեք տարվա փորձ: Այնուամենայնիվ, Օրենքի նախագծում չկա որևէ լրացուցիչ անդրադարձ ընտրության չափանիշներին կամ քաղաքական կուսակցության անդամակցությունից բացի որևէ այլ հնարավոր անհամատեղության դեպքերի: Բացի այդ, եթե Խորհուրդը դեր խաղալու է բողոքների քննության ժամանակ, այսպիսի հանգամանքներում Խորհուրդը պետք է հարի անկախության և անաչառության տարրական չափանիշներին և պետք է իր վարույթում ապահովի արդար դատավարության երաշխիքները: Խորհրդի անկախությունն ապահովելու համար հարկ է ներառել նաև այլ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

սահմանափակումներ, ինչպես օրինակ՝ տեղական կամ ազգային կառավարման մարմիններում ծառայությունը: Նմանապես, 14-րդ հոդվածը սահմանում է Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման հիմքերը, սակայն լրացուցիչ մանրամասներ չեն տրվում, օրինակ՝ պարտականությունների չկատարման դեպքում դրանց վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև վերընտրության ընթացակարգերի և վերջնաժամկետների մասին: Իրավական և ընթացակարգային հաստատության նկատառումներից ելնելով՝ առաջարկվում է, որ Օրենքի նախագիծը լրացվի՝ այսպիսի մանրամասների ներառմամբ:

89. Ի լրումն, Օրենքի նախագիծը չի նախատեսում հատուկ եղանակներ՝ ապահովելու Խորհրդի կազմի բազմակարծությունը գենդերային, էթնիկ կամ փոքրամասնության կարգավիճակի հաշվառմամբ: Օրինակ՝ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային դաշինքը (GANHRI) սահմանում է, որ «Մարդու իրավունքների ազգային հաստատությունների անդամների և աշխատակազմի բազմազանությունը խթանում է մարդու իրավունքների բոլոր հարցերի կարևորումը այն հասարակությունում, որում գործում է հաստատությունը, ինչպես նաև հասարակության վրա ազդող հարցերով զբաղվելու կարողությունը»:⁸² Բացի այդ, Փարիզյան սկզբունքները մասնավորեցնում են, որ մարդու իրավունքների հարցերով զբաղվող հաստատությունների կազմը և անդամների նշանակումը նմանապես տրամադրում են բոլոր անհրաժեշտ երաշխիքները՝ ապահովելու «մարդու իրավունքների հանրահռչակման և պաշտպանության գործում ընդգրկված (քաղաքացիական հասարակության) սոցիալական ուժերի բազմակարծական ներկայացուցչականությունը»: Մաօգնում է խթանել հաստատության նկատմամբ հանրային վստահությունը և ապահովում է հաստատության ներսում հասարակության այդ հատվածների կարիքներին համապատասխան փորձի և ներհայեցման առկայությունը: ԵԱՀԿ մասնակից պետությունները հանձն են առել աջակցել ժողովրդավարական հաստատությունների կառուցմանը պետությունների խնդրանքով, ի թիվս այլոց, օգնելով ուժեղացնել «[...] Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունները»,⁸³ որոնք պետք է լինեն անաչառ և անկախ:⁸⁴ Մարդու իրավունքների արդյունավետ, անկախ և բազմակարծական հաստատությունների կարիքը բազմիցս բարձրաձայնվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից ընդունված բազմաթիվ բանաձևերում:⁸⁵ **Օրենքի նախագծում հարկ է**

⁸² Տե՛ս Հավատարմագրման ենթահանձնաժողովի զեկույցը և նստաշրջանի երաշխավորությունները, 16-20 նոյեմբեր, 2015թ.:

⁸³ Տե՛ս *Սիստեմային ղեմ պայքարի Բոլիսարեստի գործողությունների ծրագիրը* (2001թ.), Սիստեմային ղեմ պայքարի մասին ԵԱՀԿ Նախարարների որոշման Հավելված, կետ 10, MC(9).DEC/1, 4 դեկտեմբեր, 2001թ.:

⁸⁴ Տե՛ս *ԵԱՀԿ տարածքում մարդու իրավունքների ազգային հաստատությունների ուժեղացման թեմայով փորձագետների վարչավարչական կայացած ժողովի համատեղ հայտարարությունը* (19 դեկտեմբեր, 2016թ.):

⁸⁵ Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, *Բանաձև թիվ 70/163. մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ոլորտում ազգային հաստատությունների մասին*, A/RES/70/163, որն ընդունվել է 2015թ. դեկտեմբերի 17-ին: Տե՛ս նաև

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

ներառել Խորհրդի կազմի անդամների հավասարակշռված ներկայացուցչականության պահանջներ, ինչպես նաև բազմակարծության ապահովման լրացուցիչ երաշխիքներ:

90. Ողջունելի է, որ Օրենքի նախագիծը նախատեսում է Խորհրդի անդամների՝ Խորհրդի կազմում ընդգրկվելու թափանցիկ եղանակ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կայքում թափուր տեղի մասին հայտարարության հրապարակմամբ (Հոդված 13 կետ 1):⁸⁶ Քանի որ թափուր տեղերի մասին հայտարարությունը առավելագույնի է հասցնում թեկնածուների հավանական քանակը, այս կերպ՝ բազմակարծության խթանումը, առաջարկվում է ընդլայնել թափուր տեղի մասին հայտարարության հրապարակումը նաև այլ աղբյուրներում՝ հնարավորություն տալով ավելի լայն տարածման:
91. Համաձայն 13-րդ հոդվածի երրորդ կետի երրորդ ենթակետի, թեկնածուն չպետք է լինի որևէ կուսակցության անդամ: Թեև սա կարող է ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածին և ՔՔԻՄԴ-ի 22-րդ հոդվածում ամրագրված՝ միավորումների ազատության իրավունքին հակասող թվալ, այս աշխատակարգն արդարացված է մարդու իրավունքների ազգային հաստատությունների համար: Ինչպես արդեն նշվել է ԺՀՄԻԳ նախորդ կարծիքներում, «այս հաստատությունների հետ կապված ցանկացած գործառույթ համադրելի չէ որևէ այլ գործառույթի կամ մասնագիտության հետ հանրային կամ մասնավոր հատվածներում, կամ քաղաքական կուսակցությունների կամ միությունների անդամակցության հետ, թեև որոշ մանկավարժական, գիտահետազոտական կամ արվեստագիտական գործունեություն կարելի է ծավալել՝ պայմանով, որ դրանք անհամատեղելի չլինեն Մարդու իրավունքների ազգային հաստատության պարտականությունների պատշաճ կատարման, դրա անաչառության և դրա նկատմամբ հանրային վտահության հետ»:⁸⁷
92. 15-րդ հոդվածը Խորհրդի համար սահմանում է լայն մանդատ՝ աջակցելու Մարդու իրավունքների պաշտպանին, այդ թվում՝ բողոքների քննության և խորհրդատվական եզրակացությունների տրամադրման, Մարդու իրավունքների պաշտպանին վերապահված կոնկրետ լիազորությունների իրականացման, խտրականության վերաբերյալ գործերով առաջարկությունների ներկայացման գործում: Բացի այդ, Խորհրդին իրավունք է վերապահվում Մարդու իրավունքների պաշտպանին

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի [Բանաձև թիվ 27/18. մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ոլորտում ազգային հաստատությունների մասին](#), A/HRC/RES/27/18, որն ընդունվել է 2014թ. հոկտեմբերի 7-ին:

⁸⁶ Տե՛ս GANHRI-ի [Ընդհանուր դիտարկումներ](#) կետ 1.8 առաջարկությունը՝ «լայնորեն տարածել թափուր տեղերի մասին հայտարարությունները»:

⁸⁷ Տե՛ս ԺՀՄԻԳ, [Իսլանդիայի մարդու իրավունքների ոլորտի ազգային անկախ հաստատությունների մասին օրենքի նախագծի վերաբերյալ կարծիքը](#) (6 փետրվար, 2017թ.): Տե՛ս նաև Վենետիկի Հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գլխավոր տնօրինություն, [Սերբիայի Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքի նախագծի մասին համատեղ կարծիք](#), CDL-AD(2004)041.

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ կարծիքը «Օրենքի առջև հավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (նոյեմբերի 2018թ. տարբերակի հիման վրա)

խորհրդատվություն տրամադրել ազգային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և հանրության իրազեկությունը բարձրացնելու մասին՝ կանխելու խտրականության բոլոր դրսևորումները և մասնակցություն բերելու Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցին՝ իրավահավասարության և խտրականության վերացման խնդիրների առնչությամբ: Հաշվի առնելով այն, որ Խորհրդի աշխատանքը հասարակական հիմունքներով է և նախատեսում է, որ Խորհուրդն հանդիպում է ամիսը մեկ անգամ, 15-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները և պատասխանատվությունները թվում են չափազանց և վիճելի են դարձնում դրանց ժամանակին և արդյունավետ իրագործումը: Ինչպես արդեն ավելի վաղ է նշվել, այս պարտականությունները պետք է իրականացվեն բավարար ռեսուրսներ ունեցող, ամբողջ դրույքով աշխատող և վճարվող աշխատակիցների խմբի կողմից:

11. Ամփոփիչ մեկնաբանություններ

93. Արժե վերհիշել, որ ԵԱՀԿ հանձնառությունները պահանջում են, որ օրենսդրությունն ընդունվի «որպես մարդկանց կամքն արտացոլող բաց գործընթացի արդյունք՝ կամ ուղղակիորեն, կամ ընտրված ներկայացուցիչների միջոցով» (1991թ. Մոսկվայի փաստաթուղթը, կետ 18.1):⁸⁸ Մասնավորապես, օրենսդրությունը, որը կարող է ազդեցություն ունենալ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա, ինչպես այս դեպքում, պետք է անցնի լայն խորհրդակցական գործընթացներ օրենսդրության նախագծման և ընդունման ողջ ընթացքում՝ ապահովելու մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների և լայն հանրության, այդ թվում՝ մարզինալացված խմբերի լիարժեք տեղեկացվածությունը և Օրենքի ընդունումից առաջ իրենց տեսակետները ներկայացնելու հնարավորության իրացումը: Հանրային քննարկումները և բաց ու ներառական բանավեճը կմեծացնեն բոլոր շահագրգիռ անձանց կողմից տարբեր գործոնների ընկալումը, կբարձրացնեն վստահությունը ընդունված օրենսդրության և ընդհանրապես հաստատությունների նկատմամբ: Հայաստանի օրենսդիր մարմինն քաջալերում ենք ապահովել Օրենքի նախագծի շուրջ խորհրդակցական գործընթացները մինչև դրա ընդունումը:

[ՏԵՔՄՄԻ ՎԵՐՁԸ]

⁸⁸ Հասանելի է այստեղ՝ <http://www.osce.org/fr/odhr/elections/14310>.